91
P - 73

ՄԱՍԻՍ ԼԵՌՆԵՐԻ

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՍՏՈՐՈՏՆԵՐ

Բ. Մասն

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՊՐԻԼ 21-ԻՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԹԱՏՐՈՆՈՒՄ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

1882

Доз. цензурою. Тиф. 5-го Сентября, 1882 года

Типогр. М. Вартанянца и К°- въ Троиц. пер.

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Բ. ՄԱՍ

Խաների կառավարութեան ձեւը։—Օրէնքների գործադրութիւնը։—Պաշտօնատներ։—Խաների առանձնաշնորհութիւնները։—Էրկրի գիւղատնտեսական վիճակը։—Խանի օգային ճանապարհորդութիւնը։—Շամիրմատութիւն պարսկայիների եւ տաճկահայերի մէջ։—Քանի տեսակ հարստահարիչներ կան։—Վաթսուն եւ մէկ երրորդ յոդուածի վերայ եղած տարբեր հայեացքներ։—Մագուայ հայերը։—Քրդեր եւ միսիոնարներ եւ նոցա լուսաւորութիւն տարածելու ձեւը։—Դարագոյնցիք եւ նոցա աղանդի կրօնական ծէսերը։—Դարալագեազի Թրքացած հայերը։

Ազգութեան գոյութիւնը ազգային անափառութեան առարկայի համար չէ, այլ ազգային բարեկենդանութեան համար է։ իսկ ազգային բարեկենդանութեան հիմքը, գիւղացու բարեկենդանութիւնն է։

Մագուն, Աւաջուղը, Գարայ-նին առանձին առանձին խանութիւններ են միմեանցից անկախ և վայելում են պարսից շահի հովանաւորութիւնը, ինչպէս նորա վասալները։ Դոքա մի-

մեանցից չեն զանազանվում աշխարհը կառավարելու ձևումը. այդ ձևը կամայականութիւն, բռնութիւն, ահ ու սարսափն է։ Ճշմարիտ որ չարագործութիւնները պատժվում են, բայց առաքինութիւնը աւելի շատ է վտանգվում։ Գողերին, աւազակներին կտրում են, յանցանքի ծանրութեան համեմատ, քիթը, ականջները, ձեռները, աւելի ծանր յանցաւորներին, գլուխը։ Սպանուածի արիւնը, ինչպէս Տաճկաստանում, պահանջվում է սպանողից կամ արիւնով, կամ դրամով բայց այդ օրէնքների արդար գործադրութիւնը կախուած է խանի միահեծան անձնաւորութիւնից, նորա իւր ստորադրեալների վերայ ունեցած իւր հայեացքից, մինչև անգամ նորա լաւ կամ վատ տրամադրութիւնից։ Շատ անգամ աւազակները պատժվելու տեղ վարձատրվում են, նայեած թէ գործը խանին ինչ տստիճանի շահաբեր է։ Եթէ աւազակութիւնը կատարվում է թշնամի մարդու տան, ստացուածքի վերայ, կամ սահմանից դուրսը, այն ժամանակ դա աւազակութիւն չէ անուանվում այլ քաջութիւն *)։

---

*) Ես Մագուայ մէջ տեսայ ամեն կողմից ժողովուած աւազակների մի խումբ. որոնցից մի քանիսը խանների սպասաւորութեան մէջ էին մտել։ Դրա յայտնի պատրաստվում էին թուրաց սահմանի վերայ արշաւելու։ Կողակների որթնութիւնը արդեւլեց դրանց իւրեանց նպա-

Բացի ախունդի կրօնական ատենից, ուր հաստատվում են ամուսնական կապերը և լինում են կրօնական վարդապետութիւնները, կառավարութեան միմիայն պաշտօնատունը խանի «դիւան-խանան» է։ Դա ծառայում է խանին իբրև դահլիճ, ուր ժողովվում են և ընդունվում են ամեն տեսակ հիւրեր, իբրև սեղանատուն, ուր անուշ են անում «բողբաշն ու փլաւը», իբրև ննջարան, որ ծառայում է միայն ճանապարհորդ հիւրերին, իբրև աղօթարան, ուր կատարում են «նամազը», միանգամայն և իբրև դատարան, զինուորական, ատմինիստրական, և կառավարութեան բոլոր գործերի անգիր պաշտօնատուն։ Մի խանութեան մէջ այսպիսի տներ, որոնք թէև տեսակով մի, բայց թւով շատ են, ինչպէս որ խանի եղբայրները բոլորն էլ խաներ են և իւրեանց ժառանգութիւն ընկած գիւղերի անձնիշխան միակ տէր և դատաւոր են։

Այդ խանութիւնները, թէև ենթարկուած են թագաւորաց թագաւորի իշխանութեանը, բայց թագաւորական գանձարանը նոցանից ոչինչ ուղ-

---

տակին հաստատելու, որոնք արշաւանքի ուղղութիւնը շրջեցին Սալմաստի վերայ։ Ես Գարայնիից երբ վերադառնում էի, լսեցի, որ այդ պատուաւոր գործերով զբաղված խումբը կռվումը կորցնելով մի մարդ եւ մի ձի կորագլուխ յետ էին դարձել։

ղակի եկամուտ չէ ստանում։ Հասոյթը թող տրուած է խաներին նորա համար, որ նորանք այդ միջոցով կարողանան զինուորական ոյժ պահպանել և առհարկին պաշտպանեն երկիրը նորա թշնամիների դէմ։ Այդ հիման վերայ պատերազմի ժամանակ Մագուն պարտական է հարիւր այրուձի և մի վաշտ հեռի զինուորներ ճակատեցնել. Աւաջուղը երկու հարիւր այրուձի։ Բայց խաները ի չարն են գործածում շահից տուած արտօնութիւնը. զինուորական պատրաստութեան համար բոլորովին հոգ չեն տանում։ Նոքա աշխատում են միմիայն հարստանալու։ դորա համար էլ աւերում են արքունի գիւղերը և այդ աւերմունքներից հիմնում են իւրեանց համար սեպհական գիւղեր *։

Խանութիւններից երկուսը նոր ժամանակում են հիմնուած. Աւաջուղի խաների հայրը Գիւմրեցի է։ Հիւսէին աղէն Հայտարանցոց ազնուա-

---

* Խաները իրանց սեպհական գիւղերը բազմացնելու համար գնում են արքունական գիւղի մօտ եղած մի ազնուականի հողերը եւ նրա վերայ շինում են մի նոր գիւղ։ Այդ գիւղը բնակիչներով լցնելու համար ճնշում են արքունի գիւղում բնակվածներին գրկելով նրանց ուսումնելու ջրից, երբ դա առատութեամբ բաժանվում է նոր գիւղումը. այդպիսով թագաւորական գիւղացիները ստիպված են լինում փոխադրվելու։

կան ցեղիցն է, որ Ներաղա գաշտիցն է անցել Թայջաբարայ հովիտը։ Դորանք դիմել են շահին, որը ողորմածաբար դրանց երկիր և իշխանութիւն է պարգևել։ Ահա ինչ դիւրին կերպով է հիմնվում վասալական իշխանութիւնը Պարսկահայաստանի մէջ։ Ճշմարիտ խոստովանել, ինձանում ևս ցանկութիւն ծնուեց խան դառնալու։

Շատ դժուար է մի այդպիսի աշխարհի համար բնակիչների ճիշտ թուանշանը ասել, ուր աշխարհագիր երբէք չէ եղել։ Մօտաւորապէս կարելի է երեք խանութիւնների մէջ վեց հազար նստական ժողովուրդ և երկու հազար թափառական քրդեր հաշուել։

Երկրի գիւղատնտեսական վիճակը ոչ մի բանի նման չէ։ Իսկապէս ասել, այդ երկրումը ապրում չէ ժողովուրդ, այլ մի տեսակ անասուններ, որոնք իւրեանց բոլոր էութեամբ պատկանում են տիրապետողին։ Գերիները այն առաւելութիւնը ունին, որ գոնէ նրանք կուշտ են փորով, մերկութիւնը պատսպարուած է։ Ուղղակի հարկը ծանր չէ, ամեն ծուխ պարտական է մի չերվոնեց վճարել տարին, բայց անուղղակի տուրքեր բազմաթիւ են։ Ինչ որ խանը վճարում է իւրանից զօրեղ անձնաւորութիւններին ընծայի կամ կաշառքի անունով, մի խօսքով, խանի արած ամեն ծախսերը հպատակներն են

պարտական վճարել։ Բացի այդ՝ հպատակները պարտաւոր են նաև խանի ընդարձակ հողերը վարել, ցանել, ջրել, արդիւնքը տեղափոխել, անասնոց համար գոմեր շինել, անասունները պահպանել, որոնք սատկելու պակասելու իրաւունք չունին՝ նոքա միայն պիտի ծնեն և աւելանան. օրինակ նորա ոչխարները ու կովերը ամեն տարի անպատճառ պիտի տան մի մի գառն, մի մի յորթ և նշանակեալ իւղը, պանիրը և բուրդը։ Հակառակ դէպքում գիւղացին պատասխանատու է։

Հողի սեպհական իրաւունքին երկու տէրեր կան, կառավարութիւնը և խանները։ Ամեն մի գիւղացին տասին երկու տասանորդ է վճարում արմտիքից և ընտեղեններից, բացի բամբակը, որ երեքից մեկն են վճարում և ի վերայ այսր ամենայնի գիւղացին իրաւունք չունի իւր արմտիքը ծախելու։ Եթէ արտասահմանում լաւ գին է հանում ցորեանը, բուրդը կամ բամբակը, խանը իւր կամեցած գնովը առնում է գիւղացուց, որը պարտական է իւր անասուններովը տեղափոխել արդիւնաբերութիւնքը մինչև խանից նշանակեալ տեղը։

Սահմանակից քաղաքներում, ինչպէս Նախիջևան, Երևան, Շուշի, Գանձակ և այլ ամեն տարի լցվում են պարսկաստանցի մշակների մեծ բազմութիւն, որոնք աղքատութեան յետին

պատկերն են ներկայացնում։ Երբ ես Պարսկաստանի հիւսիսային սահմանները չէի պտտել, հարցնում էի ինք իրենս, երբ այդ ողորմելիներին տեսնում էի, բաց օդումը թաւալած, կամ անխնամ պատի տակին մեռնելիս, ի՞նչ է ստիպում այդ մարդոց թողնել տուն, տեղ հայրենիք, եթէ ներելի է դրանց ունենալ սիրելիք, ամբողջ օրը տանջվել ծանր աշխատութեան տակ, ամբողջ գիշեր տանջվել անպատսպարան բաց օդումը և ջերմախտից, կամ ուրիշ հիւանդութիւններից բռնված անդարման ճանճերի պէս մեռնել պատերի տակ։ Զէ՞ որ դրանք անկախ ազգի որդիք են, ներկայ ունեն, թագաւորութիւն ունեն, ազգային ինքնասիրութեան պարծանքի համար, բայց Մագուայ գիւղերը տեսնելից զկնի խնդիրը պարզվեց։

Արդարև ընայեած, որ ազգային ինքնասիրութեան առարկայ կայ, ներկայ կայ, բայց թաթարը բախտաւոր է համարում ինք զինք, որ Ռուսաստանումն է օդ ծծում, գոնէ այդտեղ նորա փորը կշտանում է, գոնէ նա ազատ է բաց օդի մթնոլորտի տակ։ Նրան ոչ ոք չի ստիպում, որ իւրը դեռ ծարաւ, գնա խանի էշը ջրի, կամ ամբողջ տարին շարշարվի, տիրողներին կերակրի, ինքը և իւր ընտանիքը սոված տկլոր ճնան։

Մի քանի գիւղերում, ուր ես իջևանեցի ուտելու ոչինչ չ'գտայ, այստեղ յիշում եմ Եօլագեալդի

գիւղը. ամբողջ օր սոված պտտելից զկնի իջանք յիշեալ գիւղը և ինձ տարան ամենահարուստ գիւ-
ղացու տուն-հիւր։ առաջնորդիցս խնդրեցի։ որ մի քանի ձու գտնի ճաշելու համար։ մի քառորդից յետ առաջնորդս վերադարձաւ դատարկ։ նախա-
տելով թաթարներին, որ «բարաքեաթ» չ'ունեն։ Ես կարծելով որ ամեն բան փողով կարելի կ'լինի ճարել։ ամեն մի ձուին քսան կոպէկ գին նշանակեցի, որ չ'լսված գին է այդ կողմերը։ բայց զուր՝ մի ժամ առաջնորդս մի ռուբլի ձեռքումը ամբողջ գիւղը մանգալով հապիւ մի անպիտան հաւ էր գտել։ Ես տանուտէրին հարցնում էի. «բա ձեր հաւերը ձու չե՞ն ածում»։

—Ածում են պատասխանեց կիսամերկ տանուտէրը։ բայց ոչ մեզ համար. այսօր գիւղի բոլոր ձուերը հաւաքեցին խանին տանելու։ Տանուտէրը ուզում էր ասել որ հաւերը իւրեանց ձուերը աղնուական արժանաւոր ճաշակների համար են ածում։

«Բայց դուք ի՞նչ էք ուտում»։ հարցրի ես։

—«Եթէ ցամաք հաց էլ ունենանք։ այդ և ես բախտաւորութիւն է։ պատասխանեց տանուտէրը։

Գիւղերում առհասարակ կնամարդիք։ մանաւանդ օտարականներից։ չեն ծածկվում։ Մեզ ծառայող տան տիկնոջ։ իմ կողքումս նստած

թաթարները խիստ գովում էին։ Նորանք նորան «թարբիալի» (կրթված) ածականն էին տալիս, որովհետև տանուտիրոջ զինուորական ծառայութեան միջոցին, քանի տարի նորա կինը խանի անկողնոյն ծառայութիւն էր արել...

Դրանից յայտնուեց, որ Պարսկաստանի խորերը գնացող պահանորդական (караульный) զինուորների գեղեցիկ կանայքը տարվում են խանի տնական ծառայութեանը։

Երկիրը վաղուց է որ անտառներից զրկվել է. միայն փոքր Մասիսի հարաւային արևելեան կողմերումը տեղ տեղ հովանաւորուած են մացառներով, իսկ գիւղերը մեծ մասամբ փշատի ծառերով, որոնք հեռուից նորանց գոյութիւնն են յայտնում։

Ճանապարհների վերայ մի տեղեկութիւն տալու համար։ Ես մի հետաքրքրական պատմութիւն կանեմ ձեզ։ Խալաջ գիւղից Մագու գնալիս հեռուից մի բազմութիւն էր երևում։ այդ թափորը երբեմն շարժվում, երբեմն կանգնում, դարձեալ շարժվում, կրկին կանգնում էր։ Այս կողմերի ճանապարհները այնքան ամայի և երկիւղալի են, որ նորա վերայ մարդիկների պատահելը շար նշան է։ Երկար ժամանակ դիտակով մտիկ տուի, բայց չկարողացայ ոչինչ հասկանալ։ Ճշմարիտ է որ երևում էր մօտ հարիւր քառասուն հոգուց

բաղկացած գիւղացիների մի բազմութիւն, որոնք բոլորն էլ զինված էին բրիչներով, բահերով և թիակներով։ Նորանց միջին երբեմն երբեմն երևում էր մի Եւրոպական կառք։

«Այդ ի՞նչ բան է», հարցրի առաջնորդիցս։

—«Այդ խանն է, որ ճանապարհորդում է», պատասխանեց նա։

Բանից երևաց, որ խանը Տփխիսում կառքով մանգալը շատ է հաւանել, և գոցանից մինը գնելով Մագու իւր հետն է տարել և ճանապարհորդում է, բայց որովհետև շինուած ճանապարհներ չ'կան, խանը ամեն գիւղից «օլամչեք» (տարապարհակներ) է հանում և այն տեղեր, ուր երկրի պատառուածքները փոքր են լինում, խանը հրամայում է «տօլգուրուն» (լցրէք), իսկոյն բրիչ բահը գործ է դրվում, փոսը լցվում և խանի կառքի անիւները գլորվում են վերայից. իսկ ուր որ խրամատը մեծ է, երկար ժամանակ է հարկաւոր լցնելու, հաւասարելու նորան, խանը հրամայում է «գալդերբեն» (վերցրէք), իսկոյն բազմութիւնը բարձրացնում է խանին և նորա կառքին անցկացնելով խրամատի միւս ափը։

Այդպէս, բարձրապատիւ խանը «տօլգուրուն»ով և «գալդերբեն»ով անցնում է Մագուայ խանութեան մի ծայրից միւս ծայրը, աւելի ճիշտ ասել, խանը բարեհաճում է իւր կառքով և

ձիերով արշաւել գիւղացոց ուսերի և պարանոցների վերայից։

Հայ բնակիչներ գտնվում են, ինչպէս յիշեցի, Մագուայ խանութեան մէջ, 100 տուն Մագուայ մէջ, 80 տուն Քեջմիջ-թափայ գիւղում, 50 տուն Թագէոս առաքելոյ վանքի գիւղումը— ընդամենը 230 տուն։

Թաթար բնակիչների համեմատութեամբ հայերին կարելի է բարերաստիկ համարել։ Իսկ էլ հայերը առանձին շնորհքներ չեն վայելում, ապրում են թաթարների նման միաձև կառավարութեան տակ, համանման պայմաններով. նոքա նոյնպէս խաների արտերը մշակում, անասունները պահում, ձրիապէս աշխատում են, խանին տալիս են, քրդին տալիս են, բայց նրանց տները դարձեալ լիքն է տարեկան պաշարով. նաև ծախու են հանում իւղ, պանիր և արմտիք։ Ես մինչև անգամ Քեջմիջ-թափի երեսփոխի տանը չայ խմեցի և տաք կերակուրներ կերայ։ Եթէ իրանց գիւղացոց հարցնես, ինչ է այդ իրանց և թաթարների մէջ եղած զգալի զանազանութեան պատճառը. նրանք կ'պատասխանեն որ դա «Հայ քրիստոնէի տան խեր-բարաքաթն է, մեռոնի աւազանի և մկրտութեան սուրբ շնորքն է, որից զրկված են թաթարները»։ Ճիշդն ասելով այդ զանազանութեան պատճառը հայոց աշխատասիրութիւնն է, որ նրանց առաւելու-

թիւն է տալիս թաթարների վերայ և թաթարների թուլամորթութիւնը ու ծուլութիւնն է, որ այնքան ստորացնում է նրանց տնտեսապէս։

Մագուայ հայ գիւղացին տնտեսապէս աւելի ապահովուած է Տաճկա-Հայաստանի հայ գիւղացուց։ Նորա համար, որ Մագուայ գիւղացուն հարստահարող տարրը մի տեսակ է, խանի կառավարութիւնն է. իսկ Տաճկաստանի գիւղացոց թշուառութիւնները առաջ են գալիս բազմատեսակ հարստահարութիւններից։ Մագուայ քաղաքացին բոլորովին հաւասար է գիւղացու հետ։ քանի որ Տաճկահայաստանինը անհամեմատ բարձր է գիւղացուց ամեն կողմից։ որի դէմ գիւղացին չէ կարողանում մրցել։ այլ ենթարկվում է նորա ազդեցութեանը։ Որովհետև այժմեան հայ քաղաքացու բնաւորութեան մէջ ազգային բարեմասնութիւնից ոչինչ չ'կայ։ այլ այդ ազդեցութիւնը բոլորովին եսական-շահասիրական լինելով։ նա գիւղացու հարստահարողների շարքումը առաջին տեղն է բռնում։ Այնտեղ քրիստոնէի տան «խէր-բարաքեաթ»ը։ «մեռոնի սուրբ աւազանի շնորհի ազդեցութիւնը» նուազ նշանակութիւն ունին։ Հարստահարող դասակարգի և նորա տեսակների հետ ծանօթանալու համար հարկաւոր է մի քանի խօսք ասել։

Ամեն կարգի քաղաքացիները, որոնք պարապում են առուտուրով, արհեստներով, տերության ծառայությունով, իրենց պարապմունքների արտադրած ուղղակի շահերով չբաւականանալով, ցանկանում են և կողմնակի շահեր ունենալ։ Այդ ամենքը իրենց ուժի և կարողության չափ, իրենց պատրաստ ծառայությունը յայտնում են գիւղացուն, հոգալով նորա զգեստեղէնների պիտոյքը և փոխառական դրամ։ Այդ օպերացիայի մի տեսակը անուանվում է «սալաֆ»։

Քաղաքացին գիւղացուն տալիս է դիցուք մի օսմանեան ոսկի, կամ նորա արժողությամբ ապրանք, որը պարտական է մերձակայ հունձին մի ոսկու փոխառությանը, երկու չափ ցորեան տոկոս վճարել, (ամեն մի չափը հաւասար է այստեղի չորս փութին) այժմեան գնով եթէ հաշուենք մի չափը արժէ մի մէջիդեայ. մի օսմանեան ոսկին կազմուած է հինգ մէջիտից, ուրեմն քաղաքացին գիւղացուց վեց ամսուայ ընթացքում մի օսմանեան ոսկուն $^2/_5$ կամ 5 մէջիտիից երկուսը տոկոս է ստանում։ Եթէ վեց ամսեայ ժամանակ 10 մէջիդեան բերում է չորս տոկոս, նշանակում է, որ տարին տասին ութ տոկոս է ընկնում, կամ հարիւրին ութսուն։

Այս ձևը առատիճանաբար սնանկանալու ձևն է,

որ հետզհետէ գիւղացու կայքը, հողը ընկնում է վաշխառուի ձեռքը և այնուհետև նա դառնում է քաղաքացու արծաթագին ստրուկը:

Կան գիւղացիներ, որոնք յանկարծական պիտոյքի համար ծախում են իւրեանց ցանածի, աշնացանի կամ գարնացանի կանաչը, որովհետև այդ կանաչների արդիւնքը ակներև չէ, քաղաքացիք ամենաշնչին գներով տէր են դառնում գիւղացու քրտանց արդիւնքին:

Երբ գիւղացին որևէ կերպով վտանգվում է, օրինակ եթէ գողանում, հափշտակում են նորա եզները, անասունները, կամ վարակիչ հիւանդութիւններից սատակում են, եթէ այրում են նորա դեզը և մարագը, եթէ երաշտից, մորեխից, մկներից ոչնչանում է նորա ցանքը այսպիսի հազար մի տեսակ հանգամանքներին ենթարկված գիւղացին, փոխատու ընկերութիւններ չը լինելուց, վերականգնելու մտօք, դիմում է վաշխառուին, գնում է նրա ոտի տակ իւր տունը, տեղը, կայքը հողի սեփականութեան իրաւունքը և ստանում է ցանկացած փոխը, այնպիսի պայմաններով և տոկոսով, որ երբէք չի կարողանալու հատուցանել ու այդպիսով գիւղական ընտանիքներ կործանվում են անկանգնելի կերպով։ *)

---

*) Որքան որ գիւղերը աւելի մօտ են քաղաքին, այդ չափով էլ աւելի խիստ ենթարկվում են քաղաքացոց հա-

Պատուաւոր քաղաքացոց մի մասը եւս շարչիներից է կազմված, որոնք զանազան չնչին առարկաները ման են ածում գիւղերը և խեղճ գիւղացոց խաբում շինչի կտորների, ասեղների, ուլունքների հետ փոխելով փուքերով ցորեան, գարի, իւղ, պանիր, ձու և այլն և այլն։

Գիւղացու հարստահարողների երկրորդ տեղն են բռնում վանքերը։

Պատմական ժամանակից մնացած ամեն մի վանքը իւր թէմն ունի, չ'կայ ոչ մի հայ գիւղ, որ մի վանքի չը պատկանի։ Դոցանից մեծ մասը հայոց ազնուականներու թողած կրօնական ջերմեռանդութեան յիշատակն են, որոնք իրանց սեպհականութիւնքը նուիրել են զանազան վանքերին։ Ամեն մի թէմ պարտաւորուած է իւր աթոռը (վանքը) պահելու, այսինքն կերակրելու նորա միաբանութեան, վճարելով պտղին, որ բաղկացած է ցորենից, գարուց և ընդեղէններից,

---

ըստահարութեանց եւ աւելի շատ աղքատ են։ Օրինակ Վանայ շրջապատի թեմար անունով գաւառը եւ Ռշտունեաց գաւառի հիւսիսային մասը Վասպուրականի բոլոր գաւառներումը ամենախիստ կերպով հարստահարված, ամենից սաստիկ վտանգված աղքատներն են։ Դրանցից է կազմված Վանեցի մշակների մեծամասնութիւնը։

իւղ, պանիր մատաղացու, ոջու*) և հոգեբաժին. այդ բաւական չէ, թէմը պարտական է ուղարկել ձրի մշակներ, որոնք վարեն, հնձեն վանքի արտերը։ Ես ինքս ականատես եմ եղել Լիմ-Ընապատի մի ժողովարար վարդապետի բռնութեանը։ Գիւղացիք չէին կարողացել նորա պահանջած իւղի քանակութիւնը ամբողջապէս վճարել. հոգեսէր հայր սուրբը անիծելով գիւղական համայնքի ամբարշտութիւնը, եկեղեցոյ դուռը փակեց և բանալին գրպանը դնելով հեռացաւ։ Տարակոյս չը կայ որ մինչև գիւղացիք նշանակեալ իւղի պակասորդը չը լրացրին և քանի մի փունտ էլ հայր սուրբի սիրտը և օրհնութիւնը առնելու համար չ՚աւելացրին, եկեղեցու դուռը չը բացվեց։

Բացի այս վանքական պարտադիր տուրքերը, անպակաս են լինում միշտ պատահական ժողովարարութիւնները. օրինակ վանքի պարիսպը քանդվել է, կամ մի այլ վերանորոգութիւն պէտք է անել, այդ ամենը թեմականների պարքն

---

*) Ոջու նշանակում է կամաւոր տուրք։ Ոջուն եւ կաղապաւորը միոյն տուրք կարապետի եւ Մշոյ Վանքերում հաւաքելու սովորութիւն կայ։ Սուրբ Կարապետի վանքը ամենամեծ թէմն ունի, որ բաղկանում է 7 գաւառից։ Դրա մատակարարում են 300 հոգի միաբանութիւն ունեցող վանքին մի տարում երկու տարուայ ուտելեղինաց պաշար։

է։ Եկեղեցականները նաև զանազան սրբոց մասունքներով շրջում են գիւղէ—գիւղ։ քաղաքէ—քաղաք։

Երբորդ տեղն է բռնում կառավարութեան հարստահարութիւնը։ Տասանորդական տուրքը գիւղացիք վճարում են տասին մէկ։ Եւ բոլոր տեսակ տուրքերը միասին հաւաքած ամէն մի գիւղական շնչից պահանջում են մի մէջիտեայ։

Բայց այդ տուրքերը չեն գիւղացոց այնքան վնասողը։ որքան տուրք հաւաքողները։ որոնք անասելի չարիքներ են գործում գիւղերումը։ Աւելի վատ է լինում, երբ որ կառավարութիւնը տասանորդական տուրքերի երեսը ծախում է կապալառուներին։ (Կապալառուները մեծ մասամբ ընկերութիւն են կազմում խառն հայ և թուրք դրամատէրներից)։ Գնող շահախնդիր կապալառուն։ որքան որ ոյժ ունի ճնշում է գիւղացոց աւելի մեծ արդիւնք ստանալու համար։

Բացառութիւն է կազմում միայն Վարագայ վանքը. որ թէմականաց նուիրատուութիւնը նոցա ազատ կամքին է թողել։ Զնայեած որ յիշեալ վանքը Երիմեան Հայրիկի հովանաւորութեան տակ։ որքան կարողացել է իւր ուսումնարանից տուել է գիւղերին վարժապետներ։ Միացեալ ընկերութեան Վասպուրականում ունեցած բոլոր ուսումնարանների վարժապետները Վարագայ ուսումնարանի աշակերտներն են։

Շատ անգամ՝ մանաւանդ առատ տարիներու-մը՝ երբ արմտիքները աժան են լինում՝ գիւղացին ամենամեծ դժուարութեան մէջ է ընկնում՝ կապալառուները՝ կամ նորանց հետ դաշնակցած կառավարութիւնը նորանից տասանորդական տուրքը արմտիքով ստանալու փոխարէն՝ արմտիքի արժէքը փողն են պահանջում՝ Գիւղացին ստիպուած է լինում խիստ պակաս գնով արմտիքը ծախել՝ պահանջած գումարը ձեռք բերելու համար՝ Այդ ՁԵՎԱՍԻ հաշուովը գիւղացու վերայ տասանորդական տուրքը համարեայ տասին վեց է նստում՝

Ամենից յետին կարգումը դասաւորվում են քրդաց հարստահարութիւնները՝ որոնց համար շատ անգամ աւելի խիստ խօսված և գրված է՝

Դորանց բոլոր ճնշումը կայանում է գողանալումը՝ թալանելումը՝ վրէժխնդրութեան հոգով եղած հրդէհներումը՝ Բացի այդ իւրաքանչիւր հայ գիւղացին քրդերից իւր «քրիվան» (կնքաւոր) ունի՝ որի սիրտը շահում է իւր ստացուածքի պաշտպանութեան համար՝

Ես նորա համար քրդերի հարստահարութեանց նուազ նշանակութիւն եմ տալիս՝ որովհետև գիւղերում կատարված գործնական փորձերը ցոյց տուին՝ որ դա վաղանցուկ է՝ անդարմանելի չէ՝ Այն գիւղերը՝ որոնք ապացուցին՝ թէ իւրեանք իւրեանց ապրանքին տէրն են

և պատժել են և կարող են պատժել իւրեանց իրաւունքները բռնաբարողներին։ քրդերը նորանց հետ շատ ակնածութեամբ և պատկառանքով են վարվում։ Քրդերը միշտ թալանել են, յափշտակել են անտէր ապրանքները, որոնց տէրերը քաջասրտութիւն չեն ունեցել գործով ապացուցանելու թէ իւրեանց ստացուածքները իւրեանց սեփհականութիւնն է։ Քրդերը այդպիսեաց միշտ տուել են անողոք դասերը։ թէ այն գիւղական հասարակութիւնը։ որ քաջասրտութիւն չ'ունի իւր սեփհականութիւնքը պաշտպանելու, անարժան է նրանց վայելելու շնորհին։ Դորա համար էլ քրդերի հարստահարութիւնները վտանգաւոր բնաւորութիւն չ'ունեն և ինքն ըստ ինքեան վերջանում են։ մի քանի գիւղական համայնքների անձնապաշտպանութեան համար ցոյց տված օրինակները տարածվում են հետզհետէ բոլոր գիւղերի մէջ։

Կառավարութեան հարստահարութիւնքը նոյնպէս մշտնջենաւոր չեն։ մանաւանդ։ որ։ երբ դոքա դաշնաւորված չեն։ դրամատէրերի հետ։ Դոքա կախված են կառավարութեան ձևի և ուղղութեան փոփոխութիւնից։

Նա։ որ դարաւոր ժամանակով։ սկսած պատմական ամենահին անցեալից, հարստահարել է։ այժմ հարստահարում է և յոյս ունի ապագայում աւելի ընդարձակ չափերով հարստա-

հարել։ Նա այն ամենավտանգաւոր, կործանող դասակարգութիւնն է, որ հնում ինչպէս ազնուական է յայտնուել, այժմ ինչպէս կալուածատէր, իբրև պատուաւոր քաղաքացի, և իբրև շարքի քաղաքացի. իսկ ապագային կմնայ իմանալ թէ նա ինչ անուն կը կրէ։...

Այժմ գիւղացին երբ որ վտանգվում է անարդար կառավարութեան կաշառակէր պաշտօնեաներից, քրդերի յափշտակասիրութիւնից, նա դիմում է իւր կարող ազգակցի օգնութեան. իսկ այդ արենակից կեղծաւորը, քաղցր խօսքերով տիրում է նորա ստացուածքին, դնում է նորա վզին յաւիտենական ստրկութեան տառատոկը։...

Գիւղացին տէրութեան պաշտօնեաների հարստահարութեան տակ հեծում է, քրդերի հարստահարութեան տակ տրտնջում բողոքում է, հարստահարող ազգակցի հարստահարութեան տակ անմռունջ զոհի պէս ոչնչանում է։

Այսպէս են փոխակերպվում համեստ երկրագործ ընտանիքներից օրահացին կարօտ մշակները։

Այսօր մեծ. ունկնդիր, քո առաջից անդադար անցուդարձ անողը, քու ծառայութիւններդ կատարողը, քու աղբ ու կեղտ մաքրող բրդգզած արարածը, որ անցնում իւր օրը գրաստի շարշարանքով, գիշերում է խոնաւ, հոտած անկիւն-

ներումը, հեռու, կարօտ իւր սիրելիներից, թաղվում է ակամայից քո քաղաքի ապականութեանց մէջ, դա քո ձեռքից հարստահարված նախկին երկրագործ, այժմեան ստրկացած մշակն է, որի դուռը ժամանակով շատ մեծ էր քու դռնից, շատ նորա հիւրասէր հարկի տակ քեզ նմանները ապաստանութիւն են գտել, շատ կարօտներ օգնութիւն, ապաստանարան են գտել։...

Բայց եթէ նորան յաջողվեց այդ թշուառութիւնների մէջ չմեռնել և հայրենիք, ընտանեաց գիրքը վերադառնալ, քեզանից ի՞նչ ժառանգութիւն, ընծայ պիտի տանէ իւր հայրենիքին, իւր ընտանիքին։—Միայն քո քաղաքի անպարկեշտութիւնքը, Սիրենի անբժշկելի ցաւերը, քու արբեցութիւնքը, քո շռայլութիւնքը, որոնցմով այդ թիւնաւորվածը, անարժան անպէտք կը գտնուի գիւղական պարզ, անմեղ կեանքին և աշխատասէր պարապմանց։

Երբ մի ազգային մարմին ձգտում է ինքնագոյութեան, ամենից առաջ նա լրջորէն ուշադրութիւն պէտք է դարձնէ թէ իւր ներքին կենսական ուժերի միաւորութեան կապը ի՞նչ պայմանների մէջ են գտնվում։ Առանց այդ միութեան անքակտելի և սերտ համերաշխութեան շատ վտանգաւոր է մտնել մի անսովոր ծանրութեան տակ, որին ոչ մի փտած, անհա-

մերաշխութիւնից քայքայված, կամ կեղծ հա-
մերաշխութեամբ միացած հիմքերը չեն կարող
դիմանալ և պատճառ կը դառնան աւելի անո-
ղորմ վերակործանման։ Այդ կենսական ներքին
ուժերից նշանաւորը տնտեսական հարցն է։
Դա կենսական շրջանառութեան յարաբերական
կապն է, մի հանրութեան մէջ գտնված ամեն
աստիճանի դասակարգութեանց համար։

Չը կայ մի դասակարգ, 61-երրորդ յօդուա-
ծի իրագործմանը չը ցանկանար, բայց ամեն մի
դասակարգը իւր ցանկութեան բոլորովին տարբեր
տեսակէտովն է նայում դորա վերայ։

Ինտելլիգենցիան և Տաճկաստանի էֆէնդիների
երես արած խմբերը նայում են նորա վերայ,
ինչպէս մի միջոցի վերայ, որ նրանց կը մատա-
կարարէ իշխանական ազդեցութիւն, կառավար-
չական բարձր պաշտօններ. դրա համար լինի
թերևս որ այդ խմբերից մի քանիսը արդէն ձրգ-
տում են հասնելու աղնվութեան։...

Վաճառական, կալուածատէր, շարչի քաղա-
քացիները երազում են իւրեանց լայնածաւալ
օպերացիայի վերայ, մի այնպիսի գործ, որին
միշտ կը դաշնակցի աղնուական ազգակիցների
տիրապետական ոյժը և դրա համար Տաճկա-
Հայաստանում արդէն գնվել են և գնվում են
լայնատարած գիւղեր, հողեր։

Այժմ համարեա թէ մեծ մասամբ հողատէ-

բերը քաղաքացիներն են։ գիւղացիները համարեայ ոչինչ չունին։

Գիւղացու ակնկալութիւնը բոլորովին տարբեր է։ Նա սպասում է այն վիճակին, որը երբէք չէ վայելել և ոչ իւր նախնիքը պատմական կեանքումը։ Նա սպասում է թշուառութեան արտասուքները սրբելու։ կեանքի անդորրութեան։ ազատ շունչ քաշել։ աներկեան օրեր։ ապահովութիւն իւր կեանքին։ իւր ստացուածքին և իւր գործին։ Նա ցանկանում է թողնել իւրեան միայն։ որ նա կարողանայ լծել իւր առատութիւն պարգևող գութանը։ մշակել դարերով խոպան մնացած երկիրը և ընտանեկան ցնծութեամբ հնձել աշխատասէր ձեռների պըտուղը։ Կարողութիւն ունենալ պատրաստ պահելու իւր հիւրասէր սեղանը բոլոր անցաւորների համար և նոցա հետ զուարթ սրտով բաժանել արդար վաստակի արդիւնքը։ Երջանիկ լինել ընտանիքով։ երջանիկ լինել դրացիներով և բոլոր գիւղացիներով։

Մի շատ համեստ և աշխարհաշէն ցանկութիւն։ որին չեն հասել բռնակալների տիրապետութեան օրերումը։ չեն էլ հասնիլ ինքնագոյութեան ժամանակին։

Եթէ այսպիսի տարբեր հակադրական մտքերով և զգացմունքներով կարելի լինի հասնել մի նպատակի։ որի համար գերբնական կամ գե-

բազգային ոյժ է հարկաւոր, այն ժամանակ ճըշ-
մարիտ է, որ գիւղացու վզից կը վերառնեն նորա
քրտինքով տոգորված, ճնշող, կեղտոտ լուծը.
նորա տեղը կը դնեն նորը, փառքերով զարդա-
րուն, բայց աւելի ծանր, սեպհական, որի
քրտինքը միշտ պէտք է լուանալ արիւնով։

Նորան կ'ասեն «այդ նոր լուծը թէև ծանրէ,
բայց քո սեպհականն է, քաշիր հոգիդ դուրս
գայ»։

Այն ժամանակ գիւղացին կը զգայ, որ թէև
քրդեր և արտաքին հարստահարողներ այլևս
չը կան, բայց իւր վիճակը աւելի և աւելի ծան-
րացել է, ներկան անցեալից աւելի վատ։

Այդ ծանրութեան տակը նա ընկճուում է, կոր-
ծանելով իւր վերայ հաստատված շինութիւնը,
տրորվելով նորա տակը։

Ազգութեան գոյութիւնը ազգային սնափա-
ռութեան առարկայի համար չէ, այլ ազգային
բարեկենդանութեան համար է. իսկ ազգային
բարեկենդանութեան հիմքը գիւղացու բարեկեն-
դանութիւն է։

Ես անզգալի կերպով Պարսկա-Հայաստանից
անցայ Տաճկա-Հայաստանը և կատարեցի մի մեծ
խոտորումն, որի համար մեծ ներողութիւն
խնդրելով վերադառնում եմ Մագու։

Այս քաղաքի սակաւաթիւ հայերը իւրեանց ըզ-

գեստներովը կեաղտիակից [1]) մինչև պուճուճակ [2]) սափրած գլուխներով։ Իբրեանց առտնին սովորութիւններովը բոլորովին թաթարներից չեն զանազանվում։ Մատնում է միայն հայերէն լեզուն և փոքր ի շատ է տիպը։ Մի եկեղեցի ունին Կարմիր Վարդանայ յիշատակին կառուցած, ուր մի քահանայ կատարում է կրօնական ծէսերը, միևնոյն քահանան նաև կարդալ գրել է սորվեցնում մանուկներին։ Ժողովրդի մեծ մասը արհեստներով են պարապած, որոնք ձանձրացած են խաներին ձրիապէս աշխատելուց։ Մի քանի հոգի միայն Կարնոյ հետ առևտրական յարաբերութիւն ունին, ուր փոխում են Եւրոպական ապարանքների հետ տեղական գորգեր, Կապերտներ, մազեղէններ և բամբակ։

Այս կողմերը քաղաք չը լինելու պատճառաւ Մագուն քաղաք է յիշվում։ բայց նորա բնակիչները գիւղացիներից այնքան զանազանվում չեն. նորանք մինչև անգամ գիւղացուն հարստահարելու հմտութեան չեն հասել։ Հին բնակիչներից ոչ-ոք չէ մնացել. այժմեան սերունդը Բայազիդից և Ծաղկա-Հայաստանի զանազան տեղերից ժողովված մի հաւաքածու է։ Ազատ են ամեն տեսակ հարկերից, բայց պարտաւորված

---

1) Կեաղտիկ—темя. 2) պուճուճակ—затылокъ։ Լանեցոց բարբառից։

են ամենքն էլ պատերազմի գնալ երկրի պաշտպանութեան համար։

Ժողովրդական կեանքի հետ ծանօթանալու համար ես մի քանի տուն հիւր գնացի. իմ շուրջը ժողովում էին քաղաքի նշանաւոր անձինք. քահանան, Թադէի վանքի վանահայրը, որ նոյն միջոցին պտղի հաւաքելու համար էր եկել, ազգային վիճակից տեղեկութիւններ լսելու։ Սաստիկ հետաքրքրվում էին Ռուսաստանի նշանաւոր հայերովը։ Ռուսաց բանակի երեւելի հայ զօրապետների անունները անգիր գիտէին։ Նոքա հրացան ուսին իւրեանց բարձունքներից ականատես էին եղել ռուս-տաճկական պատերազմի եղրակացութեանը։ Նրանք ամեն օգնութիւն տված էին Բայազիդի հայոց կոտորածից ազատուածներին։

61-երրորդ յօդուածի շառաչիւնը նրանց ականջին ևս հասել էր։ Նրանք լաւ ծանօթ էին Ներսէս, Խրիմեան անունների հետ, բայց զարմանալին այն էր, որ ինչպէս Լուսինեան արքեպիսկոպոսի արքայական շողշողուն անունը Մասիսից այն կողմը չէր անցել։ Ինձ համար էլ կարծում էին, որ ես Ռուսաստանի հայոց գործակատարն եմ, հատկապէս ուղարկուած նրանց վիճակը քննելու և դարմանելու։ Ես չը կարողացայ նրանց կարծիքը ստել, չը հաստատել։

«Խօսք կը տաք ինձի», հարցրի ես, «որ եթէ

Երևանից ձեզ լաւ գրքեր ուղարկեմ։ Հաւաքուել ամեն կիւրակէ եկեղեցոյ սենեակումը և կարդալ միասին։ Ամենքը խօսք տուին և արդարև ես Երևանից Ռուսաստանի հայոց անունով յիսուն կտոր գրքեր։ գլխաւորապէս ազգային վիպասանութիւններ։ ուղարկեցի Մագու։ որոնք հաւաքել էի զանազան անձնաւորութիւններից։

Տէրտէրը ինձ խորհուրդ տուեց։ որ լաւ կը լինէր յորդորական մի թուղթ ևս ուղարկել եկեղեցումը կարդալու և ես ուղարկեցի նրանց իմ շրջաբերականը։

Այդ միջոցին։ կարծես։ ես լինէի ամենայն հայոց ընդհանուր Կաթողիկոսը։

«Լրագիրներ ստանո՞ւմ էք»։ հարցրի։

—"Մեզ նման ռամիկներին ի՞նչ է սազում գազէթ կարդալ„ պատասխանեցին։

Նրանք կարծում էին։ կան շատ բաներ։ որ ռամիկները իրաւունք չ'ունին վայելելու։

Լրագիրների վերայ խօսք բացուելիս։ նոցանից մէկը հարցրեց։ արդեօք ճանաչում էի ես Մշակ արքեպիսկոպոսին։

"Ի՞նչ Մշակ արքեպիսկոպոս„ պատասխանեցի.

—"Նա որ գազէթ է գրում„—պատասխանեց Մագուեցին։

Հասկանալի էր որ "Մշակի„ մեծ. խմբագրի համար էր խօսքը։

Որովհետև Եւրոպայ գնացող ազգի պատգամաւորները և այժմեան գլխաւոր գործողները արքեպիսկոպոսներ են, այդ համոզմունքով երբեմն «Աշակ»ի խմբագրին ևս եպիսկոպոս են կարծել։

«Կամենում էք», հարցրի, «այդ ձեր ձեռնադրած արք-եպիսկոպոսի գաղէթիցն ստանալ կարդալ»։

—Որ ուզենանք կ'ուզարկէ», հարցրին։

«Ի՞նչու չէ», շարունակեցի, «եթէ տաս ռուբլի բաժանորդագրին ուղարկէք շուտով կը ստանաք»։

Տաս ռուբլու խնդիրը քիչ տարակուսական տպաւորութիւն գործեց, բայց և այնպէս երեք հոգի գտնուեցին, որոնք պատրաստ էին 2 ր. 50-ական կոպէկ վճարել։ Լրութեան համար պակասում էր չորրորդը, այդ տեղն էլ ես բռնեցի և այժմ «Աշակ»ի համարները մնում են Մագու։

«Ընդունում են ձեզ հայոց վարդապետները» հարցրի.

— «Ոչ, մենք Էջմիածնից մոռացուած ենք. և ինչու համար պիտի գան. և ի՞նչ ակնկալութիւն ունեն մեզպէս աղքատ և սակաւաթիւ ժողովրդից», տխրութեամբ պատասխանում էին։

Պէտք է շնորհակալ լինենք միսիոնարներից,

որոնք մեր հոգևոր կառավարության պարտքերն են կատարում. թէև հաւատացեալներ չ՝ունին, բայց տարին մի քանի անգամ այցելում են, ձրի, կամ ժամանակին տարածել են նորանց մէջ հայերէն աշխարհաբար լեզուով ընթերցանելի գրքեր։

Բայց պէտք է նաև նկատել, որ այդ գրքերը բոլորովին միակողմանի են։ Որքան որ ինձ տնեբում պատահեց տեսնել գրանց տեսակները և ծանօթանալ բովանդակութեանց հետ, այս աշխարհի կենցաղավարութեան համար ոչինչ չը կար. այդ ամենը վերաբերվում էին մարդու հանդերձեալ կեանքին, ինչպէս «Երկնքի ճանապարհ», «Կենաց ջուր» և այլն։

Անխղճմտանք ձև է ժողովրդի հետ այդպէս վարուելը. ոտի տակ տալով նորա տեսանելի քաղաքատնտեսական ներկան և լարել նորա ուշադրութիւնը ապագայ, վերացական հանդերձեալի վերայ միայն։ Այդպիսի հոգևորականներ մենք էլ ենք ունեցել, այժմ էլ գեռ ունինք Տաճկա-Հայաստանում, որոնք խրատում են համբերութեամբ զոհել բռնաբարողին ընտանիք, ստացուածք, համոզմունք, անձնասիրութիւն. տանել առաքինութեամբ բոլոր կսկիծները, զրկանքները, անպատուութիւնները, խայտառակութիւնները երկնքի արքայութեան համար։

Երկրի արքայութեան վերայ հայ—քրիստոնէին մտածելն անգամ մեղք է:

Միսիոնարների տարածած այդ երկնային գլուխները քրքրելիս, աչքս ընկաւ մի երկրային գրքի. «Դաւիթ-Բէկի» վերայ. ուզում էի աչքերիս չը հաւատալ. Բայց նա էր.

«Որտեղից էք ճարել այս գիրքը» հարցրի.

—«Քրդերից», պատասխանեցին.

«Քրդերի՞ց», այս անգամ էլ ականջիս չէի ուզում հաւատալ. «Ի՞նչպէս-թէ քրդերից».

—«Ա՛յո, քրդերից, այստեղ ի՞նչ զարմանալու բան կայ», ասում էր տանուտերը. Քրդերը անցեալ օրեր հինգ օրինակ բազար բերելով հատը հինգ կոպէկով ծախեցին».

Չը լինի թէ, մտածումէի, քրդերն էլ հոգս են տանում մեր վիճակի վերայ և արդէն սկսել են հայերի մէջ պրոպագանդ անել, ընթերցանութիւն տարածել. Կեցցե՛ն քրդեր, ուղղութիւնը վատ չէ, նոցա տարածածը երկրի թագաւորութեանն է վերաբերում, արժան է. այդպիսով նրանք միսիոնարներից երևի կը խլեն յաղթութեան մրցանակը:

«Բայց քրդերը ո՞րտեղից են գտել», կրկնեցի.

—«Դա շատ պարզ է», աւելացրեց տանուտէրը. Քրդերը կողոպտած կը լինեն մի հայի, վեր առած կը լինեն նորա փողերը ու շորերը, որ

իրանց հարկաւոր է։ գրքերիցն էլ կամեցել են։ որ մենք օգուտ քաղենք։

Քրդերի արածը թէև անգիտակցաբար։ գողութեամբ։ բայց մի բողոք է «Գրքերի հրատարակող Ընկերութեան» դէմ։ որ մինչև այժմ անսնունդ թարգմանութիւններով է կերակրել մեր անսովոր ստամոքսները և մենավաճառութեան տակ է գրել «Դաւիթ-Բէկի» երրորդ հատորի տարածումը։

Եթէ այդ սարի առաքեալներին մի օր յաջողուէր գրավաճառանոցները մտնել։ կամ անդամ դառնալ «Գրքերի հրատարակող Ընկերութեան» այն ժամանակ մենք արժան և օգտակար գրքեր կունենայինք։

Այդ կողմերում եղած բոլոր ցեղերի մէջ իւրեանց աղանդովը։ աշխատասիրութեամբ։ պարապմունքներով։ հարստութեամբ։ թւով նշանաւոր են Գարայ—Գոյունցիք։ Դոքա մօտ երկու հազար տուն են և բնակվում են մեծ մասամբ Աւարայր գաշտի հիւսիսակողմը։ Թաթարները դրանց անուանում են «Ալ—ալլահի» (Ալուն Աստուած ընդունողներ) և «Զրա—սանդիւրան» (ճրագ փչողներ)։ Սոցա աղանդը երիստոս—կրակապաշտական մի խառնուրդ է։

Գարա—Գոյունցոց գիւղերումը մնացի մի քանի օր և որքան կարելի էր աշխատեցի ծանո-

թանալ հետևեալ կրօնական արարողութիւնների հետ՝

Նոքա տարին մի անգամ կատարում են սրբբազան կրակը լուցանելու արարողութիւնը։ Արևմտին բոլոր գիւղի երկսեռ բազմութիւնը հաւաքվում է մի ընդարձակ յարկի տակ։ Այնտեղ պատրաստուած է լինում արդէն վառելիք յատկապէս արարողութեան համար պատրաստված կրակարանումը, ուր ուրիշ ժամանակ չեն վառում։ Երբ բոլոր բազմութիւնը ժողովուած է լինում, բաց են անում գլուխները և խորին հանդարտութեան մէջ աղօթում են լռելեայն հետևեալ մտքով՝ «ով երկնքի պարգև, որ ամեն օր իջնում ես երկիրը, միշտ ջերմութեամբ կեանք ես տուել մեր պապերին, և մեր հայրերին, հասացրել ես նոցա արտերը, պտուղները. կանաչացրել ես նոցա դաշտերը, ծառերը. այրել, մաքրել ես երկիրը իւր կեղտերից, քու կենդանութեան անսպառ աղբիւրը մեզանից էլ անպակաս արա ամեն ժամանակ, ամեն տարի, ամեն օր»։ Միևնոյն միջոցին հանգցնում են բոլոր լոյս տուող ճրագները*)։ Նոցանից ամենապատկառելի

---

*) Ի ա ն օ թ. Այդ սովորութիւնից առաջ եկած է "Զրա—սոնդիբրան", անուանակոչութիւնը, որի համար թաթարները խիստ կայտառակ պատմութիւններ են անում, որպէս թէ ընդհանուր խառնակութիւն է լինում այդ մթութեան մէջ։ Բայց այդ ամենը սուտ են։

ծերունին երկիւղածութեամբ մօտենում է փայտակոյտին, մրմնջելով յիշեալ աղօթքը, և տալիս է կրակ։ Այն ժամանակ. ամենի աչքերը սևեռվում են փայտակոյտի արծարծուող բոցեղէն լեզուների վերայ։ Որքան այրումը սաստկանում է, այնքան էլ աւելանում է աղօթողների եռանդը։ Կրակը հանգչելիս նոյն լուսով վառում են հանգցրած ճրագները և հայոց Տեառնընդառաջի սովորութեան պէս շատերը այդ լուսից բաժին են տանում իրանց տան ճրագները վառելու։ Շատերը այրում են իւրեանց քղանցքի անկիւնը։ Փայտակոյտի մնացորդ, մոխիրը շաղ են տալիս արտերումը։

Մասնաւոր մատաղներ միշտ լինում են, բայց Գարա—Գոյունցիք մի ընդհանուր մատաղի արարողութիւն ունին, որ տարին մի անգամ են կատարում։

Այդ արարողութիւնը առանց կրօնաւորի չի կարելի կատարել, դրա համար գալիս է կրօնաւորը, որին շէյխ են անուանում։ Իւր ձեռքովը մորթում է մատաղացուն, եփում է, առանց ոսկորները կոտորելու։ այնքան, մինչև ոսկորները ամբողջ բաժանվում են մսից, աւելացնելով մատաղի վերայ գինի և հաց նա հաւասարապէս բաժանում է բոլոր հաւատացեալներին, բացի երեխաները։ Շէյխը իւր ձեռքովը մատաղի ոսկորները թաղում է։

Մի երրորդ արարողութիւն ևս կայ, որ մկրտութեան է նմանվում։ Երբ երեխան ծնվում է նորա համար գտնում են մի կնքաւոր, որին յանձնում են մի ընկոյզ։ Կնքաւորը պարտական է ընկոյզը պահել մինչև երեխի ինքնաճանաչութեան հասակի չափին։ Այն ժամանակ կնքաւորը կժողովէ երեխին, նորա ծնողներին և ազգականներին, կը կոտրէ յանձնուած ընկոյզը կ'ուտացնէ նորանից երեխին և բոլոր ժողովածներին։ Այնուհետև երեխան համարվում է կատարեալ մարդ և այնուհետև միայն իրաւունք ունի արարողական մատաղի բաժանմանը հաղորդակից լինել։

Ուշադրութեան արժնի է Գարա—Գոյունցոց նուիրական սօսի ծառերին կատարած ուխտը։ Այդ ծառի տակին նոքա հաւաքվում են օրերը տօնելու. ճրագ, մոմ են վառում, խունկ են ծխում, մատաղ են անում։ Այդ ուխտատեղիներին նրանք անուանում են «Ղարա—օղլան» բառ առ բառ թարգմանութիւնը Վասպուրական հայերի «Թուխ—մանուկ» բառին։ Հայերի մէջ բացի վանական ուխտատեղիները, կան երկրորդական ուխտատեղիներ. դոքա են քանդուած եկեղեցիների վերայ շինած մատուռները, ժայռերի միջի ծերպերը, ուր ճրագ, մոմ են վառում, խունկ են ծխում։ Ջերմախոտի ջրերը, ուր լողանում են ջերմողները. ծառեր, որոնց ոստերի վե-

բայ կապում են հանդերձից պատռած կտորները, գլխից կտրած մազի փունջերը։ Այդ ամենը անուանվում է «թուխ—մանուկ»։

«Գարա—օղլանը» միատեսակ միայն ծառերն են, որոնք որ այգու, արտի մէջ որ բուսնին, այնտեղը նուիրական կը դառնայ։ Այդ ծառերը ոչ ոք իրաւունք չունի կտրել, ծախել, վառել, բացի գիւղացիներից ընտրուած մի ընտանիք, որ գիւղի հիւրերը ընդունում է նրանց ծանրութիւնը իւր վերայ առնելու։ Ամենամեծ անպատուութիւն է համարուած բեխեր կտրելը*), աւելի լաւ է «Գարա—Գոյունցու» գլուխը կտրել դորա տեղ։ Գարա—Գոյունցիք իւրեանց ծէսերը գաղտնի են կատարում, վախենալով թաթարներից, դրա համար ես իմ հետախուզութեան մէջ այնքան առաջ չը կարողացայ գնալ։ Շատ բաներ կան, որ երկիւղից ծածկում են։ Նրանք արտաքուստ ձևացնում են իւրեանց մահմեդականներ, բայց ոչ «օրուջ» (ծոմ) ոչ «նամազ» (աղօթք) են անում։ Գինի օղին անխիղճ խըմում են, առհասարակ հայ եղած տեղեր նրանց մօտ հիւր կ'իջնին և շատ համակրում են նոցա։ Հայերիցը այն առաւելութիւնն ունին, որ ձմեռները պարապում են արհեստներով, առա-

---

*) Հայերի մէջ ես բեխերը տղամարդութեան նշան է եւ նրանց կտրելը մեծ ամօթ է համարվում։

ելապէս կտաւեղէններ գործելով։ Այդ գոր-
ծուածքները և զանազան տեսակ մրգեղէնները
գիւղէ գիւղ մաղ գալով ծախում են։

Երբ մի «Գարա—Գոյունցու» հարցնում ես
«ի՞նչու դուք Ալուն աստուծոյ որդի էք դաւա-
նում», նա պատասխանում է՝

—«Նրան, որին դուք Քրիստոս էք անուա-
նում, միևնոյն է, որին մենք Ալի ենք ասում։
Զանազանութիւնը անուան մէջն է միայն. մեր
և ձեր մէջ եղած տարբերութիւնը սոխի կշեռի
չափ է։

Այս ամենից զկնի ունկնդիրը թերևս կը սպա-
սէ, որ ես եղբակցութեան համար անպատ-
ճառ «Գարա—Գոյունցոց» բռնութիւնից թուր-
քացած հայեր կը հրատարակեմ։ Եթէ մենք
չորս միլիոն թուի տեղը տասը ունենայինք, դրա
օգուտն ի՞նչ, որ դրանցից մտքի, կամքի, ան-
բողջութիւն չէինք կարող կազմել։ Սերբերը Սև-
սարեցիները, Բոլգարները Տաճկահայերից քիչ
են, բայց մի տեսակ մտածողութեան, մի տեսակ
զգացողութեան համազգային կապով մարմին-
ներ են կազմում։ Եթէ «Գարա—Գոյունցիք» իս-
կապէս թուրքացած հայեր ևս լինէին, ի՞նչ
կարող էինք անել նրանց...Ի՞նչ են անում
նրանց, որոնք դեռ թուրքացել չեն և նրանց,
որոնք նոր թուրքանում են...

Վայոց ձորումը մօտ հարիւր գիւղ թուրքա-

ցած Հայեր կան, որոնց անունները և մականունները յայտնապէս ապացուցանում են նոցա Հայկական ծագումից լինելը, մանաւանդ նարցիները, որոնք այժմ էլ ծածուկ քրիստոնէութիւն են անում։ Ո՞վ այցելեց նրանց, ո՞վ հոգաց, մտածեց նորանց վերայ, ո՞ր քաջ հովիւը գնաց այդ կորուսեալ հօտերի ետևից։

Ինտելլիգենցիան զզվում է գիւղացուց. նրա կեանքի թշուառութիւններից, կեղտից, ոջիլներից. սիրում է քաղաքների տաք տեղերը, հաճոյական կեանք, քնքոյշ ճաշակ։

Անորդի Հայերը փախչում են աշխատութիւնից. Հէնց աշխատութիւնից փախչելու համար է, որ դրանք անորդի են մնացել։ Այդ մարդկային բարեմասնութիւններից զրկված արարածները սիրում են արծաթի յափշտակութիւն, գողութիւն. նրանք միայն մեռելաթաղներ են, պատրաստ պպզած մեռելահացի գլխին։

Սուտ են բոլորը. առանց գործի խօսքերը կեղծաւոր։

Համազգային հոգւոյ միաւորութեան մտքից դուրս այն ամենը, որ պատուաւոր ազնիւ անուններով միայն բեռնաւորուած մատչում է նորա սուրբ սեղանին. նա վարձկան է, նա գող է, նա աւազակ է։

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Գ. ՄԱՍ

Գարայ—Նիի խան Գիւրդ Հիւսէյին աղի ընդունելութիւնը։—Նորա հայեացքը երկրի վիճակի վերայ։—Հայերի եւ քրդերի յարաբերութեան վերայ։—Դիւղական ուսուցիչ։

Մագուայ և Աւաջուղի խանութեանց մէջ պատելիս թէ թաթարներից, թէ քրդերից և թէ հայերից անընդհատ գովասանութիւններ էի լսել Գարայ—Նիի խան Հիւսէին աղի վերայ։ Միմիայն թաթար խաները, որոնց տան հիւր լինելու, նորանց հետ մի բաժակով օղի, ռոմ անուշ անելու և միասին մի ամանից, ձեռքով նորանց անուանի փլաւը ուտելու պատիւը ունեցայ. նոքա միայն ոչինչ չէին խօսում։ Ես ուշադրութիւն դարձրի այդ անձի վերայ, որը հասարակ ժողովրդի մէջ հեղինակութիւն ու-

նէր և վայելում էր նորա գովեստները։ Դորա արժանաւորութիւնը, իւր արդարասիրութիւնը, տկարներին պաշտպանելը, բռնաւորներին պատժելն էր։ Այդ կողմերում, եթէ մի առաջնակարգ մարդ բարիք էլ չ'անի, չարիք էլ չ'անի, դարձեալ մեծ գովեստների կ'արժանանայ։ Բայց Հիւսէին աղէն դրանց դասակարգիցը չէր։ Թադէի վանքի վանահայրը նոյնպէս գովում էր դորան. «Հիւսէին աղէն», ասում էր վարդապետը, —եթէ չը լինէր՝ մենք մեծ հարուածների պիտի ենթարկուէինք։ Անցեալ Շէյխ Իբադուլլահի արշաւանքին գիւղ չը մնաց այս կողմերը, որ չը թալանուէր, ամենի հոտերը և նախիրները քըշեցին տարան։ Չը նայեած որ մեր վանքը Մագուայ խանութեան մէջն է ընկնում. բայց նորա խաները խլել են վանքի երկու գիւղերը, հողերը, ջուրը և վանքի խցերը ամբար են շինել իրանց համար.*) բայց Հիւսէին աղի շնորհիւը մենք բոլորովին անվնաս մնացինք և մի մաղ անգամ չը կորցրինք։

Նոյեմբերի 7-ին առաւօտ. գեղածիծաղ արևով

---

*) Վարդապետը պատմում էր նաև, որ ինքը քաղաքիցս դիմել է Էջմիածնա Ս. Սինոդին եւ եղելութիւնը նորան յայտնելով, խնդրել է նորա պաշտպանութիւնը, վանքի սեպհական կալուածները վերադարձուցանելու համար։ Բայց մինչեւ այժմ Սինոդը ոչինչ տնօրինութիւն չէ արել։

իջանք Աւաջուղի (Գոգ—Հովիտ) բարձրութիւնից և մտանք Թայզաբարայ գեղեցիկ հովիտը։ Վերջինքն էր օրուայ*) երբ մենք ձիերը կանգնացրել էինք խանի դռանը։ Խանը ինձ ընդունեց իւր արևելեան ճաշակով զարդարուած դիւանխանումը։ Դիւանխանի մաքրութիւնը ինքնին ցոյց էր տալիս, որ նորա տէրը ցեղով տարբերվում էր թաթար խաներից։ Զախ անկիւնում ինքն էր նստած փափուկ գահոյկի վերայ, իսկ աջը ինձ շնորհեց։ Ընդունելութեան համար մի քանի քաղաքավարական խօսքերից զկնի, որոնք համեմած էին սուրճով, խանը սկսեց իւր աջ ծնօտի վերայ եղած վէրքի տանջանքներից գանգատվել, որ իւր աւազակ ազգականները պատժելիս էր ստացել։ Այդ վէրքը պատճառել էր մի հրացանի գնդակ, որ ջախջախել էր համարեայ ամբողջ ծնօտը։ Խանը թղթի մէջ փաթաթած մի կոյտ ոսկոռ ցոյց տուեց, որ երկու տարուայ ընթացքումը թափել էին նորա ծնօտից. նորա մէջն էին ատամները և մի մեծ կտոր, որ պարսիկ հեքիմը (բժիշկ) սղոցել էր կզակից, բայց

---

*) Վանայ բարբառի մէջ օրը բաժանված է մի քանի մասերի, որոնց անուններն են. "Աղօթարանի բացումը", արշալոյս։ "Ակրատը", նախաճաշելու ժամանակ։ "Ճաշը", ճաշելու ժամանակ կէս օր։ "Վերջինքը", վերջնալոյս։ "Իրիկուն", երեկոյ։

վէրքը անբժշկելի էր մնում։ Խանը ցոյց տուեց ինձ իւր կուրծքը, իւր բազուկները, բոլորովին ծածկված սպիներով։ Դոցանից ամեն մէկը մի առանձին և ընդարձակ պատմութիւն էր պարունակում։ Աւելի հին սպիները վերաբերում էին նորա երիտասարդ ժամանակուայ սիրահարական վէպերին։

Հիսէյին աղէն մի տղամարդ էր երկարահասակ, յաղթանդամ, մօտ վաթսուն տարիներին հասած։ Նորա այրական կերպարանքի վերայ նկարված էր քաջասրտութիւն յանդգնութեան չափ, անաչառ խիստ արդարասիրութիւն, ամրված բարեսրտութեամբ։ Մի քօսքով նա լեռնան ասպետն էր, բառի լի նշանակութեամբ։ Ծանօթանալու համար, լեռնական պարզութեամբ, նա ինքզինքը ցոյց տուեց ինձ, հասկացնելով թէ. այս ես եմ, դու ո՞վ ես։

Ես քաջութեան վէրքերի սպիներ չ'ունէի նորան ցոյց տալու, արած գործեր չ'ունէի նորան պատմելու։ Վերադարձայ դէպի իմ անցեալը, մի բան գտնելու համար։ Ոչի՛նչ չը կար։ Մի քանի տարիներ տեսայ երբ ես չարչարվել էի ուսանելու, մարդ դառնալու, մի կտոր հաց ունենալու, որի համար անհրաժեշտ էր մի դիպլոմ։ Այդ հասակին պակաս չ'էին և եռանդուն քամիները, որոնց աղդեցութեան տակ ես գրում էի լրագիրներում աղգասիրաբար!։ Մի քանի տա-

բիներ, երբ ուսուցչութիւն էի արել փող աշխատելու համար։ Մի քանի տարիներ էլ, երբ ես խիստ չաղ պաշտոններ էի վարել և ապրել էի միայն կեանք վայելելու համար, այսինքն զուարճանալու գինով, օղիով, գարեջրով, հիւրիներով, արբեցութեամբ և շռայլութեամբ։ Այդ միջոցին քնում էի, հաճոյքից, արբեցութիւնից ձանձրացած կաշկանդված, որ միւս օրը ոյժ ունենայի կեանքի վայելումը շարունակելու։ Այդ կեանքի ամենալուրջ ժամանակը այն էր, երբ ես մտածում էի նոր մոդով, գեղեցիկ թանկագին կերպով հագնվելու, անուշահոտութեանց մէջ տոգորված, սիրուն, գրաւիչ երևալու, գեղեցիկ սեռը հրապուրելու համար։ Լաւ մաներներ, սուր նախադասութիւններ անգիր արած. խօսքեր ծիծաղելու, խօսքեր ծիծաղացնելու համար, փախչում էի վատ աղքատ հագնված ընկերներից։ կարծիք չը տալու համար, որ ես դրանց հաւասարն եմ։ ճանճի նման կպչում էի մեծ համարուածների պոչին, աշխատում էի ազնիւ ձեւանալ նաև ծագումով, գիտնական խելացի և այլոց համարել ռամիկներ, էշեր և աւանակներ։ Այդ ամենը, որ ընկերի կտրած մատի վերայ մի աղ ածելը չ՝արժէր, այն ժամանակ ընդունված էր բարձր կենցաղաւարութեան մէջ և գեղեցիկ սեռից խրախուսված և վարձատրված։

Ի՞նչ համեմատութիւն կարող էր լինել իմ և խանի մէջ։

Նա երկրի տէրն էր, որ իւր արժանաւորութեամբ և աշխատութեամբ էր ձեռք բերել։ Հիւսէյին աղէն ինքը միայն հաճել էր շահի սիրտը, տիրել էր Թայզաբարայ գեղեցիկ հովտին և նորա ծաղկազարդ լեռներին։ Հպատակներին մեռում էր վայելել այդ արդարաւէր անձի հովանաւորութիւնը։

Այս խորհրդաւոր լռութեանը բարեբախտաբար յաւ նշանակութիւն տուեց խանը. նա կարծեց, որ ես այդ կողմերը երբեմն երբեմն երեւացող, քաղաքագիտութեամբ պարապող, կառավարչական պաշտօնեաներից մէկն եմ, որ ծածկում է ինք զինքը իւր գաղտնի մտադրութիւնների յաջողութեան համար։

Խանը իւր վատառողջութեան վերայ խօսակցութիւնը շարունակելով, գանգատվում էր, որ իւր անձը միշտ սառն է։ Ես կարծելով, որ այդ արիւնի պակասութիւնից է առաջ եկել, մի բժշկական խորհուրդ տուի նորան, այն է հին գինի խմել։ Խանը ժպտաց, իսկ մոլլան (հոգեւորական) որ կրթնել էր նորա ձախ կողմը, նկատեց, որ մուսիւլմաններին (ուղղափառներ) արգելված էր այդ։ Երբ խանը և մոլլան պատրաստվում էին վերջինքի նամազը կատարել, ես ներողութիւն խնդրեցի նորանից գնալ

հայոց գերեզմանատունը մանգալու։

Գերեզմանոցից վերադառնալիս այս անգամ ինձ տարան յատկապէս ինձ համար պատրաստված սենեակը։ Մի փոքրիկ սպիտակացրած գեղեցիկ ննջարան էր։ որի յատակը փռած էր Խորասանի թանկագին գորգով և նորա երեք եզերքները մետաքսեայ գահոյներով (դոշակ) և մետաքսեայ ոսկեկար բարձերով։ Զախ անկիւնում շինել էին մի փափուկ գահաւորակ։ ուր ես խանի նման նստած խմեցի թէյը և ծխեցի սաթով զարդարած երկար չբուխը։ Երեկոյեան ծառան հարցրեց։ Հրամայո՞ւմ էի արգեօք իրիկնահաց մատուցանել։ Հրամայեցի... իսկոյն մի մեծ մաքուր նոր անագած պղնձէ մատուցարանի (սինի) վերայ բերին Էնբերբու բրընձից եփած փլաւը։ որի վերայ դրել էին տապակած և խաշած հաւեր։ Պէտք է խոստովանել։ որ խանը տալիս էր ինձ մի իշխանական ճոխ ընդունելութիւն։ որ նշանաւոր էր իւր անսպասելի շքեղութեամբ և մաքրութեամբ։

Բոլոր կահ կարասիները կարծես նոր լինէին և առաջին անգամ գործածվելիս։ Սենեակը լուսաւորված էր ութ ապակեայ քամու աշտանակների Եւրոպական մոմերով։ Դրանք շարված էին կարգով սենեակի մէջ տեղը։ որոնք բոլորն էլ կարծես գործարանից նոր էին ստացվել։

Ընթրիքից զկնի սպասաւորը յայտնեց։ որ խանը ցանկանում էր այցելել ինձ։ եթէ այդ

բարեհաճելի էր ինձ։ Բարեհաճեցի և մեր մէջ մի խօսակցութիւն բացվեց, որ տևեց ամբողջ երեք ժամ։

Ես մտադիր չեմ ամբողջը մէջ բերել։ այլ կը յիշեմ նորա նշանաւոր կէտերից մի քանիսը միայն։

«Ի՞նչպէս գտաք մեր աշխարհը» հարցրեց խանը։

—«Հատ վատ»—պատասխանեցի։ Այս եօթերորդ օրն է, որ ես պտտումեմ այս կողմերը և օր չ՚եղաւ, որ իմ շրջապատիցը հափշտակութիւնների, սպանութիւնների լուրեր չը լսվէին։ Հարամլումը մեծ ճանապարհի վերայ, սպանել են երկու Բաղիշեցի վաճառականներին և տարել են նորանցից երկու հազար օսմանեան ոսկի։ Դանաբուլախում սպանեցին եօթ թաթարների և տարան նորանց իւղի բեռները։ Արաբ լեար և Մարգեան գիւղերի մէջ կողոպտեցին Սալմաստեցի մշակներին։ Գարագիաղդինի և Խոյա մէջ թալանեցին վաճառականներին։ Աղբուլաղի տաւարները և ոչխարները հափշտակեցին։ Քիշմիշ Թափի եղները քշեցին, բայց գիւղացիները վրայ հասնելով կռիւ բացուեց և չորս մարդ են վիրաւորել։ Համզօ աղէն էլ դեռ նոր է վերադարձել. նա էլ իւր գործերը կսկսի*)

*) Ղանաթ. Ես Աւաջուղումն էի երբ լուր տարածուեց թէ Համզօ աղէն (Լեր Ցամկա—Հայաստանում արած

«Այս դեռ ոչինչ։ Հասարակ ամենօրեայ իրողութիւններ են։ Խօսքս կտրելով ասաց խանը։ —որ կարծեմ ձեր կողմերն էլ յաճախ են պատահում։ բայց եթէ անցեալ 1880 ին այս կողմերը լինէիք։ այն ժամանակ իսկ որ նշանաւոր գործեր կը տեսնէիք։ Այն ժամանակ աւազակների խմբերը բնակիչներից շատ էին։ որոնք ասպատակում էին օր ցորեկով։ մորթում էին ակն յայտնի։ մի կատարեալ անիշխանութիւն։ իսկ մենք օր ու գիշեր զէնքը ձեռներիս անքուն ստիպուած էինք պահպանել մեր գլուխը։

—«Կարծեմ շէյխ—Իբադուլլահի արշաւանքի ժամանակն էք յիշում։—հարցրի։

արշաւանքից յետո է դարձել։ թալանել է 263 մարդի։ քշել է թիւրքաց զօրքերին եւ նոցանից մի թնդանօթ է խլել։

Այս աւազակապետը ունկնդիրներից շատերին ծանօթ կը լինի լրագիրներում յիշուած իւր աւազակական գործերով։ 1880 թ. վերջերը Համզա աղէն տեսնելով։ որ ինքը անապահով է Տաճկա—Հայաստանում։ փոխադրուեց Մագու եւ դարձաւ թամբար ագի քիրվան։ Այնուհետեւ ամեն տարի ձմեռում է թղնուտ գիւղումը։ իսկ գարնանից մինչեւ աշուն մօտ երեսուն ձիաւորով ասպատակում է Տաճկա—Հայաստան։ յարձակվում է գիւղերի վերայ։ կտրում է ճանապարհներ։ թալանում է։ ով որ պատահի։ ում որ կարող է։

Համզա աղի խմբի մէջ գտնվում է եւ մի հայ Հասպօրնակ գիւղից։—Ալօ անունով։ Այս փուչ կենդանու աւաջնորդութեամբը Համզա աղէն անցեալ տարի քշեց յի-

«Այո՛» — պատասխանեց խանը՝ — այդ աղէտալի արշաւանքը՝ որ շատ խաղաղ երկրագործների տունը աւերեց՝ շէյխի մեծ սխալն էր։ Դա պատրաստվեց հայոց դէմ՝ հայոց խնդիրը ջնջելու համար և ցոյց տալու Եւրոպային՝ որ քրդերը մի զինուորական ոյժ են կազմում։ Բայց շէյխը շուտով համոզվեց՝ որ քրդերը առանց հայերի երբէք չեն կարող լինել գոյութիւն ունենալ։ Պէտք է ճշմարտութիւնը ասել՝ որ շէյխը իւր սխալը չը կարմրացրեց. նա ոչ մի հայի արիւն չը թափեց և ամեն տեղ ցոյց տուեց իւր պաշտպանութիւնը։ Պարսից հպատակներին փոխանակ պաշտպանելու անգթաբար կոտորեցին Մագուայ խաները՝ մի միայն կողոպտելու հա-

---

շեալ գիւղի ձիերի երամակը. Աւօն էլ փոխարէց իւր սիրած աղջկան. որի հետ ապրում է այժմ Թադէյի վանքի գիւղումը։ Զի բաւականանալով այսքանով Աւօն ցանկանում է այդ աղջկայ հետ օրինաւոր ամուսնութեամբ պսակվել. որին սէրտէրը չէ համաձայնում։ Խնդիրը հասնում է Համզօ աղին. որը քննելով գործը տեսնում է որ տղայի եւ աղջկայ կողմից այդ բան չը կայ. անմիջապէս պսակելու հրաման է ուղարկում քահանային, հակառակ դէպքում. սպառնում է նորան միրտքից եւ փիլոնից զրկել եւ դադարեցնել քահանայագործութիւնից։ Տէրտէրը տարտափած այդ ինքնակոչ քուրդ կաթողիկոսի հրամանից դիմում է վանահօր. որը ընծայով եւ աղաչանքով համոզում է Համզօ աղին սպասել մինչեւ թուրք գրեն Հասսօրնակ տեղեկանան. թէ առեւանգած աղջիկը ազատ է արդեօք. մարդ չունի։

մար։ —«Ձեր ասելով քրդերը համակրում են հայերին։ ասացի։ բայց ի՞նչպէս մեկնենք այն անթիւ հարստահարութիւնները։ որ քրդերը կատարում են Ծաձկա—Հայաստանումը։—

«Այդ բոլորը հեշտ պարզելու բաներ են։ ասում էր խանը։ Ձեր խնդիրը երևան գալուց զկնի թիւրքերը մեծ բարեկամութիւն սկսեցին ցոյց տալ մեզ։ և մեր ձեռքով կամենում էին կրակ բռնել։ այդ աշխարհը սրբել հայերից։ Դորա համար շատ մեծ գաղտնի աշխատութիւններ է եղել և լինում է։ Ի նկատի առած այդ մեծ հրապուրանքները քրդերը մի երևելի ինաս չեն տուել հայերին։ միևնոյն սովորական յափշտակութիւններն են որ կրկնվում են։ Այս տարի սահմանից անց են կացրել յափշտակած եօթ հազար ոչխար և երեք հազար տաւար։ որ անցեալ տարուան հետ համեմատած։ զգալի զանազանութիւն է անում։ Այս տարուայ յափշտակութիւնները հաւասարվում են անցեալ տարուայ յափշտակութիւնների քառորդ մասին։ Ճշմարիտ է որ այդ բոլոր յափշտակողները քրդերն են։ բայց ո՞ւր են տարել։ ո՞ւր են այժմ այդ տաւարները և ոչխարները։ Հայերը եթէ կամենում են ճանաչել իւրեանց թշնամին։ գտնել յափշտակված անասունները։ պէտք է որոնեն փաշաների։ կամ խաների մօտ։ Պարսկաստանում թող գնան Մագու։ այն տեղ

են ամենը։ Այն տեղ են Սիբիրից փախած, գաստասանից փախած Երևանի աւազակ թաթարները, որոնք յայտնապէս ծառայում են խաներին։ Այնտեղ է աւազակների բոյնը, որ պատճառում է Տաճկա—Հայաստանցոց աւերումն։ Ա՞ւր են Մանդանցոց*) մօտ չորս հարիւր տաւարները։ Եթէ Մագուայ խանը այդ յափշտակութեան չէ ղեկավարել, ի՞նչու համար խոստացել է հատուցումն անել։ Ա՞վ սպանել տուեց Բաղիշեցի երկու վաճառականներին։ Խաները այժմ նոր գիւղեր են առնում այդ սպանված Բաղիշեցոց փողովն է։ Այս ամենով ես կամենում եմ ապացուցանել, որ քրդերը շարագործ ձեռներում միմիայն գործիքներ են. կտրեցէք այդ ձեռները և քրդերը կը մեռան հայերի մշտանջենաւոր բարեկամները։ Բայց հայերը—աւե-

---

*) Մանդան Վասպուրականում մի գիւղ է, որը 1881-ին Մագուայ քրդերը կողոպտեցին եւ տարան նոցա չորս հարիւր գլուխ տաւարը։ Կառաւարչական դրդրումներից յետոյ Թամիզ աղան խոստացել էր գիւղացոց բաւականութիւն տալ։ Նա տեսայ տասն եւ չորս Մանդանցի հայերին, որոնք տասն եւ հինգ օր էր, որ սպասում էին խանի վերադարձին։ Խանը դուրս էր եկել իւր կալուածները վերատեսչելու։ Ա՛յ ոք չէր համարձակվում այդ անհաճոյ հիւրերին խանի տեղը ցոյց տալու եւ ուղղորդելու։ Խեղճերը երկար սպասելուց յուսահատված դատարկ վերադարձան։

լացնում էր խանը—իրաւունք չունին այժմեանից աւելին պահանջել։ Այնքան մեացել չէ Բլդը—խան—Բէգի, խան—Մահմուդի, խան Աւդալի ժամանակը, երբ քրդերը այս աշխարհի իւրեանց ազատութեան համար արիւն էին թափում։ Իսկ Հայերը ոչ միայն բաւականանում էին մեզ չ'օգնելովը այլ և Տաճկաց զօրակարգերումը կռվում էին քրդերի դէմ։ Հայերը իւրեանց աշխարհի ազատութեան մի կաթիլ արիւն անգամ գետ չեն թափել։ Այս համեմատութեան մէջ պէտք է յիշել, որ քրդերը, ինչպէս որ բնական է լեռնականներին, վայրենի անզուսպ են, բայց չը կայ մի ազգ, որին այնքան համակրէին, որքան հայերին են համակրում*)։ Որքան որ Տաճիկները շողոքորթէին, բայց առաջին կարելի դէպքին, նոքա կը բարձրացնեն նոցա դէմ իւրեանց զէնքը իւրեանց ազատութեան համար։ Հայերը, որ հասկացող են, հարուստ են, քաղա-

---

*) Մի զարմանալի պատմութիւն էր անում Թադէի վանահայր արժանապատիւ Իսայի վարդապետը։ 1880-ին ասում էր նա, բացի հայերի երկու գիւղերից, բոլոր գիւղերը թալանեցին։ Քրդերը վանքի չորս կողմը եղած թաթարների գիւղերը կողոպտում էին, բայց վանքին եւ նորա մօտ եղած գիւղին քողոքվին ձեռք չը տուին։ Մի անգամ սարից քշել տարել էին, վանքի գիւղի յիսուն ոչխարները, երեւի սխալմամբ, որովհետեւ մի շաբաթից զկնի, մի դիշեր վանքի պարսպի տակից մի քուրդ, խեղդ-

քակրթված են, ասում էր Հիւսէյին աղէն, իւրեանց վայրենի քրդերի վերայ երբէք ուշադրութիւն չեն դարձրել։ Ո՞վ կը փախչի քաղաքակրթվելուց, հարստութիւնից, բարեպաստիկ կեանքից, բայց այդ ամենի համար մի միջնորդ է պէտք և այդ միջնորդը հայերը միայն կարող են լինել մեզ համար։ Ես երախտագիտաբար եմ յիշում սոփի տարին, պէտք է խոստովանել որ հայերը առաջին քայլն արին դէպի մեզ. բայց դա բաւական չէ»։

Այնուհետև Հիւսէյն աղէն խիստ հետաքրքրութեամբ տեղեկութիւն խնդրեց հայկական հարցի ներկայ ընթացքի վերայ և ես ուրախութեամբ մանրամասնաբար նորան ծանօթացրի խնդրի հետ։

«Ուրեմն հայերը իւրեանց մէջ ոչինչ պատրաստութիւն չունեն, իւրեանց վրայ յոյս չունեն և յոյսը դրել են Եւրոպական տէրութեանց վրայ միայն»—ցաւակցաբար բացականչեց Հիւ-

---

ված ձայնով, կանչում էր ինձ, յայտնելով որ գիւղի ոչխարները բերել է եւ նրանք այժմ ձորի մէջն են։ Դժուար էր հաւատալ եւ այնպիսի երկիւղալի ժամանակում պարսպի գուռը բանալ, ասում էր վարդապետը, զգուշանալով մէկին կախեցի պարսպից, որ սուրգէր գործը։ Շուտով ծառան երեւաց պարսպի տակին յայտնելով, որ իսկապէս ոչխարները ձորի մէջ էին եւ քուրդը անհերեւոյթացել էր։

սէյն աղէն։—«Այո՛»—պատասխանեցի։—Հայերը արիւնհեղութիւն չեն ցանկանում. նոքա կամենում են իւրեանց թշնամիներին յաղթել գթութիւն հայցելով զօրեղ պետութիւններից և գրելով և խօսելով։ Այդ տեսակ կռուին կուլտուրական կռիւ են անուանում։

Հիւսէյին աղէն սաստիկ տխրեց։—«Առաջին անգամն եմ լսում։ ասում էր նա։—այդ ձեր կուլտուրական կոչուած կռուի տեսակը։ որ ձեր ասելով։ առանց զէնքերի է կատարվում։ Դրան իմ խելքս բոլորովին չէ հասնում։ թէ առանց արիւնի և զէնքի գործ առաջ գնայ։ յաղթութիւն լինի։ Այդ կուլտուրական կռիւը ես ուրիշ տեսակ եմ հասկանում. դա նշանակում է։ որ հայերը իւրեանց կաշուց սաստիկ վախենում են և չեն ուզում նրան ծակծկվելու վտանգի տակը դնել. նոյնպէս մեծ նշանակութիւն են տալիս քսակներին և չեն ուզում նրանց բերանը բաց անել։—«Դուք սխալվում էք։ խան։—ասացի։—այն ազգը որ ռուսաց բանակին անպակաս տվել է հերոսական զօրավարներ։ տաղանդաւոր ասպետներ։ քաջ զինուորներ։ այդպիսի մի ազգ իւր կաշու ծակծկվելից չի վախենալ։ Այն ազգը։ որ անցեալում շինել է անհամար եկեղեցիներ։ ներկայումս շինում է ուսումնարաններ։ կազմում է բարեգործական ընկերութիւններ։ Սովի տարին ստոյգ մահից ազատեց իւր կարօտ դա-

սակարգին։ Նորա քսակը միշտ բաց կը լինի բարի բաների համար։

«Բայց այդպիսի մի զօրեղ ազգ։ որ վստահ է իւր կաշու և քսակի վերայ։ ինչո՞ւ ղէնքը ձեռքում չ՚է պահանջում իւր իրաւունքը։ Ի՞նչու ողորմութիւն է հայցում։ Եւրոպական տէրութեանց վրա յոյս դնելու համար ևս դարձեալ ոյժ է հարկաւոր։ Իմ կարծեօքս։ ասում էր խանը։ նա միայն իւրաւունք ունի յոյս դնել օտար ոյժի վերայ։ երբ ինքն էլ ոյժ ունի։ Փոխատուութեան դրամագլուխը հաւատում են ոչ թէ անձնաւորութեան։ այլ նորա ստացուածքին կարողութեան։ Ի՞նչ խելք է քաղաքականութեան մէջ գթութիւն փնտռել։ Ինչտեղ շահի ընդհանուր մրցնում կայ. այնտեղ գթութիւն չը կայ և գթութեան առարկան ոտի տակ տրորվում է։ Վաթսուն տարին անցրել եմ ասում էր Հիւսէյն աղէն։ իմ ժամանակամիջոցում շատ փոփոխութիւններ եմ տեսել աշխարհի երեսին։ Շատ ազնիւ և մարդասիրական անունների տակ կատարվել են սարսափելի արիւնհեղութիւններ և յափշտակութիւններ ստացուածքի։ հողի։ Ինչտեղ ուժի գերակշռութիւն կայ։ այնտեղ անիրաւութիւնը իրաւունք է դառնում։ յանցանք։ ոճրագործութիւններ—առաքինական պարտքեր։ Հայերը իւրեանց յոյսը պիտի դնէին գլխաւորապէս իւրեանց վերայ և հետե-

ւարար քրդերի և ասորիների վերայ. դա մի բնական դաշնակցութիւն է, որովհետև Հայոց խնդիրը, ասում էր Ֆիւսէյին խանը, միևնոյն քրդերի և ասորիների խնդիրն է, որքան որ Հայերը քրդերի և ասորիների զարգացման Համար աշխատեն, այնքան էլ իւրեանց գործին կ'օգնեն։

Խանը իւր մտքերի մէջ աւելի շատ առաջ գնաց, որքան ես կարծում էի։ Քրդերի և ասորիների մէջ ուսումնարաններ բացանելը ուղղակի Հայոց պարտականութիւնն էր Համարում նա։

Երբ որ խանը այսպէս խօսում էր, ես տառապում էի, իմ յիշողութեանս մէջ պատկերանում էին մեր ուսումնարանները իւրեանց Հոգաբարձուներով և ուսուցիչներով։

Ես ճանապարհորդել եմ, տեսել եմ. ես ինքս ուսուցչութիւն եմ արել, չորս տարի Ագուլիսում, մի տարի Տփխիսում, մի տարի Շուշում։ Ես մեր ուսումնարաններին ծանօթ եմ...Ճշմարիտ էր ասում խանը. մեր պարտքն էր բարոյապէս կրթել մեզ Հետ դարերով ապրող, շահերով կապված մանր ազգերին ասորիներին, քրդերին, եզիդիներին, Պարագոյունցոց և այլն։ Բայց խանը չը գիտէր մեր դպրոցների գաղտնիքը, կամ մեր մէջ դպրոցներ որքան տարածուած են, կամ որքան արժանի են դպրոց կոչուելու, ինչ են պատրաստում ապագայի Համար։ Արտաքին մասը

ճշմարիտ որ շատ գրաւիչ է, որի ձայնը մինչև Գարայ—նիէ հասել, խանը ևս լսել է։

Էջմիածնում մի ճեմարան կայ, բայց Արարատեան գաւառում մոտաւորապէս տասն և ութ հազար բնակչաց համար, բացի Իգդիրից, ոչ մի ուսումնարան չը կայ։ Ապարանում մօտ քսան և հինգ հազար բնակիչների համար մի տարրական ուսումնարան չը կայ. Գառնի Բասարումը մօտ քսան հազար բնակիչների համար մի տարրական ուսումնարան չը կայ։ Դարաչիչակ գաւառում մօտ տասն և չորս հազար բնակիչների համար մի ուսումնարան չը կայ. Գեօկչայ գաւառի մօտ տասն և վեց հազար բնակիչների համար մի ուսումնարան չը կայ. Գանձակի գիւղերում առաջ վեց ուսումնարաններ կային, այժմ համարեա բոլորը փակվել են։ Բայց կան վարձկան թէմական տեսուչներ, որոնք թէև թեմի համար են ստեղծուած, բայց միշտ ապրում են քաղաքներում։ Ի՞նչ բան ունեն այդ պարոնները քաղաքներում։ կարծեմ թեմը քաղաք չէ նշանակում։ Իսկապէս թեմական տեսչի պարքն է ամբողջ տարին իւր թեմումը լինել, գիւղից գիւղ, ուսումնարանից ուսումնարան շրջելով, փորձնական դասեր խօսել, մանաւանդ մեր վարժապետների նկատմամբ։ Բայց թեմական տեսուչները քաղաքներում մնում են իւրեանց երկրորդանկան շահերի համար։ Պաշտօնին նուի-

ռուած մի անձի համար պատուաւոր կը լինէր, եթէ նա փոքր ի շատէ զոհել չը գիտէր, ուռճ. կի անբաւարար հանգամանքումը կամ հրաժարվել պաշտօնից, կամ ամբողջ տարին գիւղերում անցկացնել, առանց ուշ դարձնելու երկրորդական շահերին*)։

Երբ մի թեմական տեսչի հարցնում ես ի՞նչու այս ինչ գաւառում ուսումնարաններ չը կան, կամ եղածները փակուել են։ Կը պատասխանէ, թէ ուսուցիչներ չը կան**)։

Աւելի ուղիղ կը լինէր ասել, թէ ուսուցիչներ պատրաստելու գործարան չը կայ։

Ո՞րտեղ են պատրաստել ներկայ գիւղական ուսուցիչները։ Մեծ մասամբ Ներսիսեան ուսումնարանում, ինչ տեղից դուրս են եկել երիտա-

---

*) Ն ա ն ո թ. Թեմական տեսուչների մէջ գովելով պէտք է յիշել գեր. Ստեփան քահանայ Տէր Ստեփանոսեանին, որ ուշ հարիւր ռուբլի ռոճիկով թեմական տեսչի պաշտօնը շատ խղճմտանքով էր կատարում։ Երբ նա զգաց, որ այդ անշան ռոճիկը քաղաքում անբաւական էր, հրաժարվեց տաշտօնից։ Այժմ Տփխիսի թեմական տեսուչը ստանում է 2000 ր. Երեւանինը 1400 ր. եւ Ճանապարհի ծախս. Շուշունը 1000 ր.

**) Ն ա ն ո թ. Տաճկա—Հայաստանի հասնոր խոտելն անգամ աւելորդ է. այնտեղ ուսումնարաններ ամենեւին չը կան։ Ցաւալի է յիշել, որ մի քանի ընկերութիւններ դատ-

սարդներ առանց ժողովրդական ուղղութեան, առանց ազգային հոգոյ և ապրուստի համար ցրվել են գիւղերը։ Այսպէս պատրաստուած ուսուցիչները գիւղերումը բնականաբար միշտ փորձանքների են պատահում. օրինակի համար մի տեղ վարժապետը գաս է ուտում և քարոզում է ժողովրդին և իւր աշակերտներին, որ գաս ուտելը մեղք չէ. դրան գիւղացիք չեն կարող համբերել կը ծեծեն և դուրս կ'անեն։ Միւս տեղ վարժապետը գնում է եկեղեցի և տեսնելով որ տէրտէրը դեռ չի եկել, ինքն է օրհնում ժամը։ Այն վարժապետը, որ խառնվում տէրտէրի գործերին, գիւղացիք սորան չեն կարող պահել։ Ուրիշ տեղ վարժապետը Դարվինի մտքերը աղճատելով քարոզում է, որ Ադամ Եւան սուտ են, մեր նախապապը պարոն օրանգուտանգին հատարակութիւնից այդ մեծ պակասութիւնը լցուցանելու համար։ Բայց այդ ընկերութիւնները ոչնչան անընդունակ։ անփորձ. աննախատես գտնուեցան, որ առանց հաստատուն դրամագլխի պատրաստութեան նորա աշխատեցին իւրեանց բոլոր կարողութեամբ բազմաթիւ ուսումնարաններ բաց անել։ Այդ ամենը նորա անկարող լինելով նիւթապէս եւ բարոյապէս կատարել, կորցրին հաստատակութեան առաջ իւրեանց վարկը եւ այժմ ստիպուած են այնքան անիծորհուրդ եղանդով բացած ուսումնարանները հետզհետէ փակել։ Դժբախտաբար օր կը դայ, որ "Միացեալ ընկերութիւնները" ոչ մի սեսումնարան չեն ունենալ։

տանդն է եղել։ Մի այլ տեղ վարժապետը վա-
զում է հարսների ետևից, կամ երկու գիւղա-
ցոց կռուացնում է, որ նորանց համար գան-
գատի տեղիք տայ և ինքը դատարանին խնդիրք
գրի նոցա համար, կամ գաղում է Քրիստոսի
Աստուածութեան, սուրբ Կուսի յղութեան և
անարատութեան վրայ*)։ Բայց գիւղացին այս
ամենին չի կարող դիմանալ. նա իրաւամբ իւր
վարժապետից բարոյական բարձր օրինակներ է
սպասում, բայց այդ սպասելիքը չը գտնելով,
գանակոծելով դուրս է գցում «փարմասիոն մո-
լորեցուցչին»։ Իսկ մեծ ուսումնարաններումը,
ուր մի քանի վարժապետներ խմբովին են լինում
կոիւը, ինտրիգները անվերջանալի են. շատ տեղ
ժողովուրդն է նրանց հաշտեցնում։ Ամէն մէկ
վարժապետը, տեղական և մեծ ոռճիկ ստա-
նալու համար, աշխատում է ընկերից բարձր
լինել, համարումն ունենալ, դրա համար էլ նա
ամեն կեղտոտ միջոցներ գործ է դնում ոտի
տակ տալու ընկերի պատիւը, թէ աշակերտների
և թէ ժողովրդի առաջ։

Մենք չենք մեղադրում գիւղական վարժա-

---

*) Ծանօթ. Այս ընդհանուր երեւոյթը առանց բա-
ցառութիւնների չէ. կան վարժապետներ, որոնք խմբմտան-
քով են կատարում իւրեանց պարտքը եւ դասատան
պաշտօնը։

պետին։ իւր պակասութիւններով հանդերձ, այդ ամենը նա ուսել է։ իւր հետ դուրս է բերել ուսումնարանից։ Նրա աչքի առաջ են եղել կենդանի օրինակներ։ արժանաւորութիւնից դուրս առանձնաշնորհութիւնք վայելող շարչի վարժապետներ։ որոնք ազգային ուսումնարաններում։ իւրեանց բոլոր կեանքի համար։ կարծես կապալով են առել ուսուցչական պաշտօնի տեղերը։ Նա ականատես է եղել պաշտօններ ձեռք բերելու։ նրանք մշտապէս վայելելու համար եղած ինտրիգներին։ Մեր ուսումնարանները դեռ անկելանոցների և աղքատանոցների նմանութիւն ունին։ ուր տեղ ծառայում են ոչ նրանք։ որոնք արժանաւորութիւն ունին։ այլ մարդահաճոներ։ որոնք պաշտպանութիւն ունին։ Նրանք թէև լուսաւորութիւն տարածելու համար կազմակերպութիւն մարմին են։ բայց հոգի չ'ունին։ Դորա համար և զարմանալի չէ։ շատ բնական է։ որ նորանից դուրս են գալիս բոլորովին մարմնացած շարչի վարժապետներ։

Միայն այն ժամանակի հեղեղը օտար օրինակների ազդեցութիւնն է։ որ հոսում է վարձկան վարժապետի քթի տակից և մնում է աշակերտների մէջ և նրանց հոգի և կեանք է տալիս։ Կը գայ ժամանակ։ որ վարժապետները անձնանուիրութեան դասեր պէտք է առնեն աշակերտներից։

Մեզ պէս ազգի համար, գիւղական վարժապետի տեղը վսեմ նշանակութիւն ունի։ Գիւղական վարժապետի վրա պէտք է նայել ինչպէս մեծ պաշտօնի վրա կանգնած մեծ մարդի վերայ։ Նա ապագայ ժամանակի քաղաքակրթութեան հիմնադիրն է։...

Մեզ պէս ազգի բարոյական վերականգնման համար գիւղական վարժապետը չը պէտք է մարմին լինի, ինչպէս հասարակ մահկանացու, այլ հոգի անձնազոհութեան, սուրբ հոգի, որ առաջնորդում է իդէալական բարձր մտքերի զարգացման. ինչպէս սուրբ հոգի էին քրիստոնէութիւն տարածող առաքեալները։

Մեր գիւղացին վարժապետից սպասում է ամենը. նա նորան տուել է միշտ իւր մէջ առաջին տեղը տէրտէրի կշտին. այդ նշանակում է, գիւղի հոգևոր տիրոջ կշտին դնել նորա քաղաքական տէրը։ Բայց գիւղական վարժապետը դեռ երբէք չէ արժանացել այդ տեղին։

Գիւղական վարժապետը գիւղի մտաւորական զարգացման առաջնորդն է։ Նա ձմեռները սովորեցնում է աշակերտներին ուսումնարանումը. երեկոները գտնվում է գիւղական ժողովներումը. այնտեղ նա նորանց կը պատմէ այլ աշխարհների բախտաւոր գիւղացիների պատմութիւնները. թէ ինչպէս նորանք հասել են բարօրութեան այդ աստիճանին. ո՛վ է գիւղացու թշնա-

մին, բարեկամը. ի՞նչումն է գիւղացու թշուառութեան պատճառը, հողի նշանակութիւնը, աշխատասիրութեան հրաշքները. թէ ինչպէս աշխատասէր, զարգացած գիւղացին գուրմանի մաջը կառավարելից կը հասնի մինչև վերին աստիճանի բարօրութեան։

Երբ վարժապետը հոգնում է խօսելից, նա կը կարդայ վէպեր, այնտեղ ամէն բան կայ. անցեալը, ներկան էլ. գեղեցիկ օրինակներ, վատերն էլ. մոլութիւններով վարակուած տիպեր, ինչպէս մատնիչներ, հարստահարողներ և այլն. առաքինի հերոսներ, որոնց կեանքի նշանակութիւնը հասարակութեան երջանկութիւն է եղել. այդպիսիների հաստատամտութիւնը, քաջասրտութիւնը, անձնազոհութիւնը։

Գիւղական վարժապետը գիւղական երիտասարդութեան հոգին է. նա նրանց տօն օրերին կ'առաջնորդէ որսի, այդ տեղ են տրվում ինքնավստահութեան, ինքնապաշտպանութեան առաջին դասերը. այդ միջոցին հազար և մի պատմութիւններ կարելի է անել։ Դա առաջին կարգի մարմնամարզութիւն է մարմնի առողջութեան համար։ Դրանով տրվում է երիտասարդներին քաջասրտութիւն դիմագրաւել վրտանգներին. վարժութիւն ձէնքեր գործածելու, սերելու և գործ դնելու։

Երբ գալիս են երկիր գործելու օրերը վարժա-

գեղը արձակումէ իւր մանկական ուսումնարան-ը, այնուհետև նա գիւղի գիւղատնտեսն է։ Նա հերթով կը մասնակցի ամեն մէկի վարին, հունձին, կալին, և այլն. աշխատումէ նորանց հետ ինչպէս նոցա ընտանեաց որդին, ճաշումէ միասին ընտանիքի աղ ու հացը։ Նա ցոյց է տալիս աւելի դիւրին արդիւնաւոր ձևեր, խորհուրդներ հողը պարարտացնելու համար, գեռ նոր անծանօթ սերմեր ցանելու համար, ծառեր տնկելու համար, որքան օգուտ են տալիս ծառատունկները, անտառը երկրագործական նոր գործիքներ ունենալու համար. գիւղի մաքրութիւնը, տների կարգով և առողջապահական կանոններով շինուածքը և այլն։

Երբ կը պատահեն հասարակական դժբախտութիւններ, ինչպէս մորեխ, աւազակների յարձակումն, վարժապետը առաջինն է, որ ժողովրդի գլուխը անցած, առաջնորդում է նորանց հասարակական թշնամու դէմ*)։

Այդպիսի վարժապետին ամենքը կը հետևեն։

Այդպիսի վարժապետների միատեսակ ուղղու-

---

*) Դանօ Թ. Պ. Վարդան Էղիազարեան. 1889 թ. Բանանց գիւղի ուսուցիչ. առաջինն եղաւ իւր աշակերտների հետ մորեխների դէմ դուրս եկող։ Բոլոր գիւղացիք հետևեցին նորան եւ արտերի թշնամուն ոչնչացրին։

թիւնը յառաջ է բերում մոքի և զգացմունքների միութիւն. միատեսակ զգալու, միատեսակ մտածելու և միատեսակ գործելու։

Այդպիսի վարժապետներ ունեցող Տաճկահայաստանցին երբէք ստրուկ չի մնալ